


5474



9/47.925)

LT-16

4688

2007

w113

3(47325)  
S-16

2002

ԳՐԻԳՈՐ ԱՂԱՅՈՒՆ

2002

ԾԱԳՈՒՄ ԵԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ

ԸՆՏԱՆԵԱՅ ԲԱՐԵԿԱՄ ՄԷ

«Մեծ Մարդիկ չեմ մեռմիր»

324



ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

1898

Հայության քայլածութեան  
"Արքան", առաջին  
շեմանքնեան

հայրեան

Դաշտ

25798-Ա.Դ.

Խոր առաջ ցած  
ինչուն

2004

5386-569-



Ա. Ռ

ԱԶՆՈՒԱՇՈՒԹ ԵՐՈՒԱՆԴ ԷՖ. ԱՂԱԹՈՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԵՐԿՐՈՒԹՈՒԹ

Սիրեցեալ բարեկամս

ՔԸ

Մեծանուն հօրդ կենագրուքիւնն քեզ կը  
նուիրեմ. ոչ բանատեղծի մը խոշորացոյ-  
ցով քննած եմ նորա արժանիքներն, զի  
մեծ էր նա արդեն. և ոչ իմաստակի մը  
հայեացքներով երեսան հանած եմ իշր յատ-  
կուրիշներն, որք բացարձակ էին: Աս պարզ  
պատմուքիւնն է Գրիգոր Աղարծնի, հոգով  
ազնիւ, սրտով բարի, զգացմամբ վեհ, հա-  
շատարիւ պաշտօնեալ իշր վեհապետին և  
անձնանուշեր իշր ազգին: Տիպար մարդ և  
տիպար հայ մ'էր նա վերջապէս, և իբր  
տիպար օրինակ կը ներկայացնեմ զայ հա-  
յուրեան:

Մեծ մարդիկ չեն մեռնիր, ուստի և կեն-  
դանի և հայրդ իշր յիշատակներով և պի-  
տի մեայ յաշտ:

ԸՆՏԱՆԵԱՅ ԲԱՐԵԿԱՄ ՄՅ

Ապրիլ, 98 Կ. Պոլիս.

# ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Պ. Ա. Թ. Ա. Ե. Ա. Դ. Ե. Ր. Դ. Ա. Ս. Ա. Խ. Ի. Խ.



Գաբրիէլ

(1670ին Բալուէն կ. Պոլիս եկած)

Պարուն

Արքիս	Յովաննէս	Գայթանէ	Սույնէ
-------	----------	---------	--------

Կէմ

Վարդան

Արքուկի մայրապետ  
Աղաթօն (1757-1849)


(1822-1889) Յովանէփ  
(ամուրի) Գեղէնն (1784-1834)

Արքուկի	Գրիգոր	Միքայէլ
(1825-1868)	(1820-1864)	

Յերզաք (1852)

Երանեանդ (1860)

Երանեանդ (1862)



Գրիգոր Աղարոն

## ԳՐԻԳՈՐ ԱՂԱԹՈՆ

ԾԱԳՈՒՄՆ ԵԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

**Ա**ՂԱԹՈՆ ԵԱՆ գերզաստանի ազգաբանութիւնն՝ մինչ ժէրու դարու վերջերն կըրցինք ելնել։ Մեզ ծանօթ նախահայրն Գարբիել Փալագեան անուն հիւսն մ'է, Բալուի գիւղերէն զաղթած ի կ. Պոլիս, 1670ի ժամանակներն։ Գարբիել կը յառաջադիմէ ի կ. Պոլիս, կ'ըլլայ ճարտարապետ, և մինչեւ իսկ յաջողի անուանիլ կայսերական ճարտարապետ (հաւանականաբար Սովորան Սիւլյաման թէ), և Սովորանին սիրելին կ'ըլլայ։ Իբր քրիստոնեայ՝ իւր փայլուն զիրքն շատ մը նախանձորդներ կը ստեղծէ, որք ահիւ Սովորանին յարգէին զնա. սակայն յետ մահու վեհապետին՝ իրենց ներքին հակակրութիւնն երեւան կը հանեն, և սկսին հակառակել նմա։ Գարբիել խալֆան նախատեսելով այս հա-

կակրութեանց ցաւալի հետեւանքներն , իւր Պարոն անուն որպեսյն և ընտանեաց հետ ԺԵՐԿ դարու վերջերն կը գաղթէ Եալովայի գիւղերէ մին , ուր մեծատարած հողեր գնելով՝ Երկրագործութեամբ կը պարապի : Գաբրիէլ արդէն ծերունի էր և քիչ ժամանակէն կը մեռնի : Պարոն նորանոր հողեր գնելով՝ իւր ազարակն օր քան զօր կը մեծցնէ և կը ծաղկեցնէ :

Պարոն կ'ունենայ Երեք մանչ և Երկու աղջիկ զաւակ : Աղջիկներն՝ Գայիանէ և Սողոմէ՝ տեղացի հարուստներու հարս կու տայ , մանչերն Եարգիս , Յոլիհաննէս և Գաբրիէլ՝ որք Գալֆայեան կը կոչուէին , իրենց պապուն արհեստին անուամբ , յետ իրենց հօր Պարոնի մահուան՝ կը գաղթեն ի Գաբրիթ , ուր իրենց հօր և հաւուն սիրելի Երկրադորձական արհեստն կը շարունակէն ընդարձակատարած հողերու վրայ : Գալֆայեան հարազատք իրենց բարեգործութեամբ և առաջինի վարուք ամենուն սիրելի և ակնածելի կ'ըլլան :

Սարգիսի մասին տեղեկութիւն չունիմք . սաւակյն , Յոլիհաննէսի Նշան որդիին սերած է հանրածանոթ Արքունի մայրապեան , հիմազիր կ . Պոլսոյ Խասպիւլի Աղջկանց Որբանոցին , որ 1889ին վախճանեցաւ : Խոկ Գաբրիէլ Երկու

զաւակ ունէր , Վարդան և Աղաթոն : Վարդանի մասին բան չգիտեմք , սակայն Աղաթոն կ'ըլլայ իւր հօր յաջորդն , կ'ընդլայնէ հօրենական ազարակին , նորանոր ազարակներ ու հողեր կը գնէ , կը լինի աեղւոյն նշանաւոր մեծատունն և Գաբրիթի հողերու <sup>3/4</sup>ին կը տիրանայ : Աղաթոնի հարստութիւնն կը զրգուէ տեղացի թուրքերուն , նա մանաւանդ եւ Ահլէսէրիններուն նախանձն , որք մտազրեն խոկ սպաննել զնա : Մահու վճիռն չարագործաց կողմանէ արգէն արտած՝ և ծրագիրն ալ գծուած էր՝ Երբ Աղաթոնի պաշտպանութիւնն ու Երախտիկն Երկար ժամանակներէ ի վեր վայելող թուրք մը՝ տեղեկանալով խորհրդոյն , կը հազորդէ Աղաթոնի , որ կիշերայն ձի նստելով կը հասնի իւսկիւտար և այսպէս մազապար կը պրծի մահուանէ : Եհանիսէրի իրենց զոհի ազատումն տեսնելով կը կատաղին , կը յարձակին նորա ազարակի վրայ , կը աիրեն հողերուն և կը տանին կենգանիներն , ու կ'ուստեն զանել վերջապէս Աղաթոնն ու զնա սպաննել : Աղաթոն իւր հետքն թշնամիներուն չծանօթացնելու համար՝ կը քաշուի կ . Պոլսոյ Հրձակայներէն Ալիպէյ գիւղն , և անդ ազարակի մը մէջ իրը մշակ կը ծառայէ : Այս ժամանակամիջոցին սակայն՝ Ա-

զաթոն կը թղթակցէր իւր կողակցին հետ և կը միսիթարէր զնա, համբերութիւն քարոզել. կը պատուիրէր իւր գոյութիւնն նոյն իսկ իւր ազգակցաց չծանուցանել, և կը խռատանար զինքն եւս կ. Պոլիս բերել տալ քիչ ժամանակէն :

Ժամանակ մը այսպէս իբր սոսկ մշակ աւ պրելէ վերջ՝ կը ներկայանայ Գաղաղ ամերային և կը պատմէ եղելութիւնն : Մեծանուն ամիբան իրաց տեղեկանալով՝ անմիջապէս կայսերական հրաման հանել կու տայ բերել տալու իւր ընտանիքն ի կ. Պոլիս, կառավարութեան հսկողութեան տակ :

\* \* \*

Աղաթոն իւր կողակցին Գարթալէ բերած հարստութեան բեկորներով կը յաջողի զնել Քիաղդ-հանէի մօտերն Ալիպէյ գեղի ազարակն, ապա և Զիլիֆտարի հողերու մի մասն : Աղաթոն օր քան զօր կ'ընզայնէր իւր հողերու ասրածութիւնն, և կը պարապէ՛ ոչ միայն երկրագրծութեամբ այլ և պարտիզապանութեամբ և մանաւանդ կանխահաս (Երևան) ընդեղէններ և պտուղներ հասցնելով : Այս ազարակի մէջն է որ առաջին անդամ

գետնախնձորն կը մշակուի ի Թուրքիա, որոյ հունտերն իտալիայէն բերել տուած էր :

Ալիպէյի ազարակն օր քան զօր կը ծաղկի շնորհիւ Աղաթոնի ջանից, և կ'ըլլայ մի համբաւաւոր ափակար ազարակ, զոր տեսնալ կու զան շատ անգամ Պոլսոյ շրջակայից մեծ հողատէրերն :

Աղաթոն կը մեռնի ի խոր ծերութեան 1849ին, 92-ամեայ հասակաւ :

Աղաթոն ունեցաւ չորս զաւակ, երկուքն մանչ՝ Գեղենն և Յովսէփ, և երկուքն աղջիկ՝ Տուտու և Մարզրիտ անուամբ : — Աղաթոն արդէն ի վաղուց ազարակի հոգն յանձնած էր իւր Գեղենն որդույն, որոյ կ'օգնէր իր կրտսեր եղբայրն Յովսէփ : Սաբա ի վաղուց իրենց հօր անուամբ Աղաթոնեան կը կոչուէին :

Գեղէռն խիստ բարի, աղնիւ և կրօնասէր մէկն էր, իսկ իւր եղբայրն Յովսէփ՝ ունենալով իւր տոհմի աղնիւ յատկութիւններն՝ նաեւ խիստ ուսումնասէր, և իւր ժամանակի կ. Պոլսոյ հազուազիւտ ֆրանսագէտներէ մին էր . լաւ մշակած էր իւր մայրենի լեզուն և ժամանակին գիտութիւններն : Այնչափ սիրեց ուսումն ու կրօնն՝ որ շերազեց իսկ գտնալ եկեղեցիէն և գրքերէն դուրս իրեն ընկեր մը, և ամուրի մնաց :

Ալիպէյ զիւղի ագարակի բարզաւանումն արդէն յարուցած էր շատ մը նախանձօրդներ, յորս և ականաւոր էր իւր զրացի լազ-Մէհմէտ Ալի փաշա հողատէրն, փեսայ Սուլթան Մահմուտախն՝ որ բազմիցս այդ ազարակն գնեւլու առաջարկներ ընելէ վերջ, տեսնալով Գեղդէնի մերժումն՝ սիսաւ հակառակել և իւր ծառաներու և կենդանեաց միջոցաւ՝ աւրշտկել կու տար ցանքերն ու հունձներն : Գեղդէնի նկատի առնելով այս ամենօրեայ վնասներն, հարկավրուեցաւ վերջապէս ծախել զայն ամենաշնչին գնով մը՝ 1850ին :

Գեղդէն ցաւ ի սիրա թողուց իւր վաստակաւոր հօր քրտանց արդիւնք այդ ծաղկեալ տիպար ազարակն՝ և սրտաբեկ չուզեց այլ եւս ուրիշ հողերու տիրանալու բաղձալ, և բոլորովին քաշուեցաւ գործունէութենէ . սակայն այս ինողիր մեծ վիշտ կը պատճառէ իրեն, չլրնար մոռնալ, կը մաշէ զինքն և կը շատէ իւր վախճանն, և վերջապէս երկու տարի եաք (1854ին)` Զատկի խթումի օրն յեկեղեցով՝ հաղորդութիւն առնելէն անմիջապէս վերջ՝ յանկարծամահ կ'ըլլայ ի հասակի 70 ամաց :

Գեղդէն թողուց երեք զաւակներ Միքայէլ, Գրիգոր և Սրբուհի : Միքայէլ իսխատ խելացի

կրակոտ և ուսումնասէր էր միանգամայն . աշակերտեցաւ խասգիւղի Ներսէսեան վարժարանին, մշակեց բաց ի մայրենի լեզուէն, թուրքերէն, իտալերէն և ֆրանսերէն : Նախ պետ եղաւ Ճէզայիրցի Ամիրային շերամի գործին, զոր թողլով՝ կառավարական տասանորդի արոց վարձակալութիւն կ'ընէր . ապա եղաւ զատաւոր : Իւր այս պաշտօնից մէջ մոսցած չէ իւր ազգն և միշտ եղած է ազգային նշանաւոր գործիշ . Միքայէլ կը մեռնի 1864, օգոստոս 12ին, 44 տարեկան հասակաւ : Գամի այժմ Գրիգոր Աղաթոնին, որ այս մեծ գերդաստանի ամենահոյակապ դէմքն է :

\* \* \*

Գրիգոր Աղաթոն՝ ծնեալ 1823 յուլիս 4ին ի Խասպիւղ, աշակերտեցաւ զիւղին Ներսէսեան վարժարանին, ուր իւր ուշիմութեամբ Ճէզայիրեան Մկրտիչ ամիրային ուշն հրափրեց իւր վրայ և զնա ունեցաւ իրեն պաշտպան : Գրիգոր լաւ ձայն ունէր, զգութիւն ալ կ'ընէր : Սա մշակեց ոչ միայն հայերէնն և թուրքերէնն՝ այլ և ուսաւ իտալերէն և ֆրանսերէն լեզուներն : Այս օտար լեզուաց գործնականի մշակութեան համար՝

ստէպ կը յաճախէր կալաթիոյ Անթիքանի  
Լութիքի աղային խանութն, ուր եւրոպացիներ  
կը յաճախէին և ուր միշտ ֆրանսերէն կը  
խօսուէր : Գրիգոր հմուտ էր նաեւ մաթե-  
մաթիքի և այլ գիտութեանց . դիւրին էր դու-  
շակել թէ նա մեծ մարդ պիտի լինէր, և ար-  
դէն զայս վկայէին բոլոր իւր ծանօթներն :

Գրիգոր Աղաթոն մշակելով հանդերձ լե-  
զուներն, ուսմանց և գիտութեանց՝ նա մա-  
նաւանդ մաթեմաթիքի մեծ սէր ունէր, իւր  
հօր և նախահարց արհեստին — երկրագործու-  
թեան — համար մասնաւոր համակրանք մը կը  
տածէր, երբեք առիթն չէր փախցներ իրենց  
Ալիպէյի ազարակն երթալու և երկրագործա-  
կան աշխատութիւններն տեսնելու ու քըն-  
նելու :

Ճէզայիրեան ուզելով իւր պաշտպանելոյն  
փախագն պատկել, 1840ին յղեց զայն ի  
Փարիզ, թուրք գեսպանատան առաջին թարգ-  
ման կրօնիկեան Յակոբ Էֆէ յանձնելով նորա  
դաստիարակութեան և երկրագործութիւն ու-  
սանելու հսկողութիւնն : Գրիգոր Աղաթոն  
Կրիստոնի երկրագործական վարժարան մտնե-  
լու կը պատրաստուի և Աթիմարանեան Գե-  
ւորդ Էֆէ հետ՝ որ մի և նոյն նախատակաւ  
անդ զայցած էր, 1843ին վարժարան կը

մտնէ, որ ժամանակին Եւրոպիոյ երկրագոր-  
ծական բարձրագոյն հաստատութիւնն էր :

Գրիգոր Աղաթոն նշանաւոր կ'ըլլայ յա-  
շակերաս . առ այս իբր ապացոյց կրնամբ յի-  
շատակել 1845 մայիս 4 թուականաւ վար-  
ժարանի տեսչութեան կողմանէ իւր ծնողաց  
զրիւած վեցամետայ քննութեանց արդիւնք  
վիճակացոյցն, զոր գտանք իւր թղթերու մէջ :  
Այս վիճակացոյցն ամէն ուսմանց մասին խիստ  
գոհացացիչ նիշեր կը պարունակէ, և ապա  
տեսչութիւնն կը ջատագովէ նորա վարքն,  
յառաջազիւութիւնն, աշխայժն, տիպար աշ-  
խատասիրութիւնն, և այլն<sup>1</sup> :

Յայնմամ կրինեօնի շրջանաւարտք իրենց  
վկայականներն առնելէ առաջ՝ ազարակի մը

1. Արժան կը համարիմ այս վկայութիւնն  
նոյնութեամբ առա ընդօրինակել :

Monsieur Aghaton suit les cours avec bau-  
coups d'assiduité, il en profite et fait des pro-  
grés notables, son zèle et son application  
soutenus sont exemplaires, nous sommes per-  
suadés qu'il sortira de l'école instruit et  
capable, et sera l'un des meilleurs élèves de  
sa promotion, sa conduite est parfaite, nous  
n'avons que des louanges à lui donner sous  
tous les rapports.

մատակարարութեան մասին աշխատութիւն մը  
պարտէին պատրաստել, Աղաթոնի այս աշ-  
խատութիւնն իստա նշանաւոր եղած է և ար-  
ժանի ըրած է զինքը տեսչութեան և ուսուց-  
չական մարմնոյն գովեստից : Այս ընակիր  
գործն գեռ կը մնայ իւր արժանաւոր հարա-  
զատին Երուանդ Էֆէ քով, և որ աւելի  
երկրագործութեան ամփոփ և ընտիր դասա-  
գիրք մ'է՝ քան պարզ տեղեկագիր մը :

Այն ատենաբերն կրինեօնի վարժարանի ա-  
ռաջին շրջանաւարտներն արքային՝ հետ ըն-  
թերելու պատոյն կ'արժանանային, Գրիգոր Ա-  
ղաթոն առաջին աշակերտներէն լինելով՝ լուի-  
ֆիլիպի հետ հաշելու պատիւն ունեցաւ. սե-  
ղանին ներկայ էր նաեւ Թուրքիոյ գետպանն  
մեծն Բէշիս փաշայ, որոյ գիտել կու տայ  
Լուի-ֆիլիպ Աղաթոնի յաջողակութիւնն և  
զայն կ'անուանէ Թուրքիոյ երկրագործական  
ասպագայ մեծ գործիչն :

Աղաթոն էֆ. Կրինեօնի վարժարանը թողէ-  
վերջ՝ ժամանակ մը իւր արհեստն գործնա-  
կանագէս մշակելու համար՝ զանազան ագա-  
րակներ կը մնայ, կ'այցելէ Ֆրանսայի, Պել-  
ճիկայի և Անգլիոյ մեծ ագարակներն և շերա-  
մաբուծութեան կերպոններն կը հետեւի նաեւ  
առեւտրական, անտեսագիտական դասուց, և  
դառնայ ի կ. Պոլիս 1847ի վերջերն :

\* \* \*

Կայսերական կառավարութիւնն բամկակի  
մշակութեան զարկ մը տալու համար, 1845ին՝  
Ա.յ-Մատֆանոյի մօտակայ Ա.յ-Մամայի ա-  
զարակն բամկակի մշակութեան վարժարանի  
վերածեց . յանձնելով նորա տեսչութիւնն  
Տայլիս անուն ամերիկացոյ մի, որ յատկա-  
պէս բերուած էր 7 տարուան պայմանագրով:  
Յաճախող աշակերտք այցելու էին, և 300—  
700 դրշ. ամսական կ'ընդունէին իրը տե-  
զափոխութեան ծախս :

Տայլիս մեծ ատածութեան վրայ կը  
ցանէ բամկակն, երկու տարիներ իրարու-  
վրայ չյաջողութիր. կառավարութիւնն համզուե-  
լով Պոլսոյ կլիմայի անյարժարութեան, կը  
վճարէ Տայլիսի եօթնամեայ վարձն և կը  
ճամբէ զայն :

Բէշիս փաշայի առաջարկութեամբ Ա.յ-Մա-  
մայի հաստատութիւնն երկրագործական վար-  
ժարանի վերածուելով Աղաթոն էֆ. 1848ին  
գործին զլուին կ'անցնի. աշակերտաց թիւն  
50ի կը սահմանէ, և նոցա ամսաթոշակներն  
250 դրաշի կ'իջեցնէ. աշակերտք գիշեր-



օթիկ էին, և իրենց առած թոշակաւ պարտէին հոգալ իրենց պէտքերն և սնունդն : Աղաթոն էֆ. տեսոչ և միանգամայն զլիաւոր ուսուցիչ էր, ընդունելով ռոհիկին զատ ամսական 4000 դրշ : Ուսուցիչ էին անդ խթիմարաճեան գէորդ էֆ., Սիրունեան կարապետ էֆ., Քառէնծա անուն եւրոպացի մը : Գործնական երկրագործութեան հրահանդիչն իտալացի մ'էր, իսկ պարտիզպանութեան մարզին ֆրանսացի մը :

Հաւանականաբար այս վարժարանի տեսչութեան ժամանակամիջոցին՝ Գրիգոր Աղաթոն պատրաստած է իւր երկրագործական գասազիրն փրանսերէն լեզուաւ, որոյ միայն ծրագիրն ձեռքերնիս հասած է, զոր արժան կը համարիմ ընդօրինակել աստ' ի գոհացումն մասնագիտաց հետարկութեան :

1<sup>e</sup>. Partie. — *Notions générales de Botanique et de Physiologie végétales.*

2<sup>e</sup>. Partie. — *Météorologie agricole.*

3<sup>e</sup>. Partie. — *Agrologie.*

4<sup>e</sup>. Partie. — *Des moyens d'améliorer les terrains agricoles.*

5<sup>e</sup>. Partie. — *Des opérations ou pratiques agricoles, et des instruments aratoires.*

6<sup>e</sup>. Partie. — *Des forces motrices en agriculture.*

7<sup>e</sup>. Partie. — *Culture des plantes.*

8<sup>e</sup>. Partie. — *Economie rurale.*

9<sup>e</sup>. Partie. — *Technologie agricole.*

10<sup>e</sup>. Partie. — *Zootechnie et économie du bétail.*

11<sup>e</sup>. Partie. — *Architecture rurale.*

Աղաթոն էֆ. իւր տեսչութեան ժամանակամիջոցին իւր ուշն զարձուցած էր մասնաւորապէս շերամաբուծաթեան վրայ, զոր երկրի հարստութեան մի կարեւոր աղբիւրն կը համարէր : Շերամաբուծական նորանոր զրութիններ մասց, ի մէջ այլոց՝ խողակներն (cocon) ըստ եւրոպական կարեւոր մասնաբաներու՝ պարպելու զրութիւնն ուսուց և ընդհանրացման աշխատեցաւ, և ըստ այնմ մասնաբաններ հաստատել առաւ շերամագործական կեղրոններու մէջ, յորս նշանաւոր էր Պիլէմիկինն :

Մէկ ու կէս տարիէն (1849ի վերջն) Աղաթոն էֆ. Ա.յ-Ամայի վարժարանի տեսչութեան պաշտօնն խթիմարաճեան գէորդ էֆին յանձնելով՝ ինքն ձէզայիրեանի անձնական գործերու տեսչութիւնն ստանձնեց : ձէզայիրցի

ամիրան այս ժամանակներն խիստ կարեւոր դիրք և ընդարձակ գործունէութիւն մ'ունէր. Տաճկաստանի գրեթէ բոլոր մաքսերն վարձած էր, և ունէր սեղանաւրական կարեւոր տուն մը :

Ճէղայիրցի ամիրան 1852ին սնանկանաշը՝ Աղաթոն Էփէնտին պարապ կը մնայ, և ինքնինքն զրական աշխատութեանց կու ասյ. կը սկսի գրել ֆրանսայի երկրագործական թերթերուն, և կ. Պոլսոյ *Journal de Constantinople* լրագրոյն մէջ՝ երկրագործական, և երկրագործական անսես սաղմատութեան վերաբերեալ յօպուածներ : Աղաթոն Էփէ զրութիւններն մեծ համակրանք կը զանեն նա մասնաւնդ ի ֆրանսա, ուր Պարտիզանանուրիւն կայսերական լենկերուրիւնն զայն թղթակից անդամ կ'ընարէ 1853ին : Այս ատեններն է նաեւ որ Երկրագործական տնտեսագիտութիւն Թուրքիոյ անուն կարեւոր աշխատասիրութեան կը ձեռնարկէ, գործ՝ զորմէ պիտի խօսիմք վերջն :

Աղաթոն Էփէ եռանդն ունեցողն չէր կը նար երկար ատեն միայն զրական աշխատութիւններով բաւականանալ . ուստի Տօք. Սերվիչն Էփէ միջոցաւ ծանօթացաւ թուրք աւագանույն, մշակեց նոցա բարեկամութիւնն և

1856ին ընարաւեցաւ անդամ վաճառականական բարձրագոյն խորհրդոյն :

— Գ. Աղաթոն Էփ. 1858ին Արտենիոյ թագաւորութեան թիւրենի ցուցահանդէսին Տաճկաստանի կողմանէ պատուիրակ կ'անուանի : Յունիսի 5ին ցուցահանդէսի տեսչական ժողովն զնա կ'անուանէ անդամ միջազգային քննիչ ժողովոյն լւու բաժնին (Ճերամաբանական արտադրութեանց) իր ներկայացուցիչ Թուրքիոյ կառավարութեան<sup>1</sup> : Այսցուցահանդէսին մէջ կը տրուի ոսկի միտաշ մը Առվելանին համար, տաճկաստանցի շերամաբաններէն եօթն' միտաշներ կ'ընդունին (որոց երկուքն արծաթ և հինգն պղնձեայ էին), և չորսն պատույց յիշատակութեան կ'արժանանան. իսկ Գրիգոր Էփ. կ'ընդունի Առ Մորիսի և Լազարի ասպետի աստիճանն և Քբանշանն (սեպտ. 9):

Աղաթոն Էփ. ցուցահանդէսի վախճանէն վերջ անդ մնաց ժամանակ մը, տեղական երկրագործութիւնն և վաճառականութիւնն ու

1. Արտենիոյ արքային հետ Թուրքիոյ շերամաբուժութեան մասին տեսակցութիւն մը կ'ունենայ, ուր հաղորդած է առ իւր եղբայրն, պրած յուլիս 8 թուրական նամակաւն :

սումմասիրելու համար . անտի փարիզէն անց-  
նելով<sup>1</sup> դարձաւ ի կ . Պոլիս :

Գրիգոր էֆ . Թիւրենի ազգային ցուցահան-  
դէսի մասին տեղեկագիր մի մասուցած է եր-  
կրագործութեան , վաճառականութեան և հաշ-  
սարակաց շինութեանց նախարարութեան , որոյ  
փրանսերէն օրինակն կայ իւր թուղթերուն  
մէջ :

Գ . Աղաթոն էֆ . Եւրոպայէ վերապարձին՝  
վաճառականական հաշուակալութեան ժողո-  
վյն անդամ կը կարգուի :

1859ի յունիս 4ին Թիւրենի երկրագոր-  
ծական ակադեմիոյ թղթակից անդամ կ'ըն-  
տրուի՝ իւր շերամաբուծական ծառայութեանց  
համար :

1860ին Միջրեմախոյի ասաիման կը աը-  
րուի Աղաթոն էֆէն , և ելեւմախց նախա-  
րարութեան բարձրագոյն դիւանին (տիվանը  
մոռհասեպար) անդամ կ'ընտրուի : Նոյն տար-  
ւոյն լերջերն թղթագրամոց բարձման հա-  
մար Օսմ . կայսերական կառավարութիւնն

1 . Այս անդամ Փարիզ գտնուած ատեն Ու-  
մասդրաց մեծ ընկերութեան մէջ կը մտնէ , և փա-  
րիզեան “La clémence d'amitié , , անուն օթեա-  
կին կ'անդամակցի :

պէտք ունենալով մի փոխառութիւն ընել՝  
Անգղիոյ զիւեց . որ առաջարկեց տեսնալ նախ  
դանձուց վիճակն ու տետրակիներն : Ֆուատ  
և Ալի փաշաներն Աղաթոն էֆէ կը յանձ-  
նեն կանոնաւոր տոմարներու պատրաստու-  
թեամբ գանձուց վիճակն ներկայացնելու գործն:  
Աղաթոն էֆ . ամիսէ մը կը յաջողի պահան-  
չեալ տոմարներն պատրաստել : Անգղիոյ կա-  
ռավարութեան կողմանէ գանձային վիճակն  
քննելու եկող պաշտօնեաներն՝ պահանչացմամբ  
կը տեղեկագրեն իրենց պետութեան , թուր-  
քիոյ տոմարակալական օրինաւորութեան և  
տոմարակեաի (Աղաթոն էֆէ) հմտութեան  
մասին : Անգղիոյ թագուհին մի ոսկի ժամա-  
ցոյց նուէր կը զրկէ Գրիգոր Աղաթոնի (1862  
փետ . 22) , և Օսմանեան կառավարութիւնն  
Ուշակի սահեի աստիճանն կը շնորհէ նմա :

Գր . Աղաթոն 1862ին Տար իւր ֆիւռուն  
թղթագրամոց բարձման հաշուակալութեան  
սենեկին տնօրէն կ'անուանի : 1863 յունիս  
5ին Մէջիտիէի երրորդ աստիճանի շբան-  
շանն կը արուի իրեն :

\* \*

Այ – Մամայի երկրագործական վարժա-  
րանն՝ տեղւոյն հակառակալապահիկ ըլլա-

լուն՝ նախ Այ — Ստեֆանիօ և ապա Խասդիւլ  
փոխազրուելէ վերջ 1862ին ատեններն փա-  
կուած էր։ Այս ատեններն կը խորհուէր  
Գաաթըգիւղի մօտ Գուրպաղըլը—Ճէրէ անուա-  
նեալ կայսիրական ազարակին մէջ բանալ  
մի երկրագործական վարժարան։ Աղաթոն  
Էֆ.ի յանձնուեցաւ այդ խնդրոյ ուսումնասի-  
րութիւնն և վարժարանի կանոնազրի ու ծրա-  
զրի պատրաստութիւնն։ Աղաթոն Էֆ. կա-  
տարեց կառավարութեան յանձնարարու-  
թիւնն, սակայն ապա ինչ ինչ պարզայից  
բերմամբ այդ մտազրեալ վարժարանի բա-  
ցումն տեղի չունեցաւ։ Այս աշխատութեան  
ֆրանսերէն օրինակն կը տեսնամք իւր թուղ-  
թերուն մէջ, որոյ խորագիրն է։

Projet de loi tendant à établir une école d'agriculture dans la ferme de Sa Majesté Impériale située à Kourbaghly Dérée, près Kadi-keuy.

Աղաթոն Էֆ. 1863ի կ. Պոլսոյ ցուցա-  
հանդէսին մէջ մեծ գեր ունեցած է իրբ ան-  
դամ և քարտուղար ցուցահանդէսի կարգա-  
գիր յանձնախմբին, որոյ այլ անդամք էին,  
Մուսթաֆա փաշա՝ հասարակաց կրթութեան  
նախարար, Քիամիլ պէջ, Սերլիեր Էֆ. Նիշ-  
զիմ պէջ, Աղմի պէջ։ Աղաթոն Էֆ. պատրաս-

տած է ցուցահանդէսի ծրագիրն և այլ աշ-  
խատութիւններն։

Գրիգոր Աղաթոն 1864ին օսմ. հեռա-  
գրութեան ընդհանուր տնօրէն կը կոչուի, և  
յաջորդ տարին Փարիզ կը դրկուի իբր օսմ.  
պատուիրակ Փարիզու հեռագրական համա-  
ժողովն (congrès)։ Այս անգամ Փարիզ  
գտնուելուն կ'անդամակցի « Ժողովրդական  
անտեսագիտութեան գործնական ուսումնա-  
սիրութեանց միջազգային ընկերութեան » ,  
յորում խիստ պատկանելի զիրք մը կ'ու-  
նենայ։ Աղաթոն Էֆ. Փարիզէ վերադարձին՝  
կը հաստատէ ի կ. Պոլսո տեղական թղթա-  
տարութիւնն։ Այս ատեններն իրեն կը յանձ-  
նուի նաեւ ևամբ ուսմումիյէի պարտուց  
քօնօլիթեերու վերածման անօրէնութիւնն,  
զոր բանի մը ամիսներ միայն վարեց։ Այս  
առթիւ ստացաւ ուշաի եվլիյի աստիճանն։

1866ին օսմ. թղթատարութեան ընդհա-  
նուր տնօրէնութիւնն ալ իրեն կը յանձնուի.  
նոյն տարին հեռագրական միջազգային հա-  
մաժողովոյն՝ օսմ. կառավարութեան կողմանէ  
պատուիրակ կը կարգուի։ Այս ժողովոյ զինա-  
ւոր զբաղումն կը ընդհանուր սակագնոց խըն-  
զիրն։ Աղաթոն Էֆ. մեծ համակրութիւն կը  
վաստի այլ պատուիրակաց մօտ, համա-

ժողովոյն մասնակցող կառավարութիւնը իւրենց շքանշաններով կը պատուեն զայն, որպէս Ռուսիա՝ սուրբ Աթանհուղաւոփ կարգին Բ. աստիճանի շքապրամ յղեց (1866 հոկտ. 16ին). Աւտրիա՝ երկաթէ թագի երկրորդ աստիճանն (1866 յունիս 28). Մարտենիա Մօնիժոյի և Լեզառի կարգին հրամանատարի աստիճանն (1866 նոյեմբ. 28): այս կարգի ասպետութեան աստիճանն արգէն ընդունած էր Թիւրէնի ցուցահանդէսի առջիւ, որպէս յիշատակեցինք:

Աղաթոն էֆ. 1867 օգոստոս 44ին կրկին Փարիզ կը զրկուի, թղթատարական միջազգային հրամաժողովոյն իբր թուրքիական պատուիրակ: Համաժողովը լրանալու մօտ էր՝ երբ հրաման ընդունեց կայսերական կառավարութենէն աշխատի՞նաեւ Տաճկաստանի օտար թղթատարական տուններու բարձման խնդրոյն: Աղաթոն էֆ. մեծ գուարութեամբ յաջողեցաւ վերջապէս այս մեծ խնդրոյ լուծման: Ոռվաթան Աղիզ իմանալով զայս, հրաման կ'ընէ 5000 ոսկոյ շնորհ մ'ընել և Պալայի աստիճան տափական տալ. կամի եւս որ անմիջապէս Պոլիս գալով իրեն ներկայանայ: Աղաթոն էֆ. չէր կրնար վերապառնալ, զի՞ այդ կարեւոր խնդրին սկզբամբ լուծուած էր, սակայն զեռ

գործնականի վերածելու գիտարութիւններ կային, զորս հարթելու համար կարեւոր էր իւր ժամանակ մը Փարիզ մնալն: Աղաթոն էֆ. այս խնդրոյ վակիման կ'աշխատէր երբ հիւանդացաւ:

Մինչդեռ հիւանդ էր, Սուլթան Աղիզ զայն Հասարակաց շինութեանց նախարար կ'աշխանէ, ու հրամանագիրն Փարիզ կը զրկուի:

Մի և նոյն ատեն (1868 ապրիլ 8) Նարուլէն՝ Փանսական Լեհիոնն տ'օնեօնի կարգին հրամանատարութեան աստիճանի խաչն զբրկած է իրեն, իբր վարձք իւր մատուցած հեռագրական և թղթատարական ծառայութեանց, և ի շնորհաւորութիւն իւր նախարար անուանուելուն:

Աղաթոն՝ Թուրքիոյ առաջին բրիստոնեայ նախարարն եղած է, և առ այս տեղական և երրորդական թերթերն՝ մեծապէս կը ջատագովին Աղաթոն էֆինտիփ հազուազիւտ յատկութիւններն՝ այսպիսի մի կարեւոր պաշտօնի համար:

Աղաթոն էֆ. ի հիւանդութիւնն յառաջ կ'երթայ, իւր կողակիցն Փարիզ կը հասնի. այլ ի զուր, հակառակ բժշկական ջանից և իւր անթիւ բարեկամաց խնամոց՝ կը վախճանի 27/4 մայիսին: Մեռնելէն ժամ ու կէս առաջ

ըսած է. «Խելքս վրաս է, ամէն բան կար-  
զին է, խճմտանքիս վրայ ծանրութիւն մը  
չունիմ, պարտքս կատարած եմ, ձեռքէս ե-  
կածը ըրած եմ»: — Եւրոպական թղթա-  
տարութեանց Տաճկաստանի ճիւղերն ջնջելու  
համար ստորագրող կառավարութիւններն՝ Ա-  
ղաթոնի մահուան վրայ՝ յետս առին իրենց  
որոշումն ըսելով թէ՝ «Մենք յանձին Աղա-  
թոն Էֆ.ի մեր ունեցած վստահութեան աղա-  
գաւ ընդունած էինք զայն, զի համոզուած էինք  
նորա կարողութեանց վրայ, սակայն քանի  
որ նա չէ այլ եւս, հարի է որ մեր թղթա-  
տարական տուներն մնան ի Թուրքիա»: և  
այսպէս խնդիրը չլուծուեցաւ:

\* \* \*

Փարիզի անտեսավիտաց լնկերութեան  
մայիս 5ի ժողովին (մահուան յաջորդ օրն)՝  
Պ. վիլօմիկ Աղաթոն Էֆ.ի մահուան մասին  
խօսելով՝ հետեւեալ խօսքերն ըսած է:

«Պարոնայք, ցաւով սրտի կ'իմացնեմ ձեզ  
թէ Յսմ. տէրութեան հասարակաց շինու-  
թեանց նախարարն Աղաթոն Էֆ. երէկ ա-  
ռաւօտ ժամը 7ին մեռաւ 44 տարեկան հա-  
սակին մէջ...: Այս մահն զգալի կորուստ մ'է

անտեսական զիտաւթեան, անմոռանալի իւր  
բարեկամաց, ու անողոք բոլոր մարդկութեան  
համար»: և հանգուցելոյն կենսագրութիւնն  
ընելէ վերջ կը յաւելու. «Ելեւմտից վրայ  
գիրք մը պատրաստած էր, որ ֆրանսերէն և  
տաճկերէն լեզուա պիտի հրատարակուէր,  
և որով Աղաթոն էֆ. գարուս ամենէն հոչա-  
կաւոր անտեսագիտաց կարզը պիտի անց-  
նէր...: Զէր կրնար հաւատալ, բարեկամ,  
կ'ըսէր ինձ, թէ աշխարհային արկածից մէջ  
մարդ նրչափ ինքզինք երջանիկ կը զգայ՝  
երբոր խղճմտանքն հանդարտ է, և մարդկու-  
թեան ալ ծառայութիւններ ըրած է, և որով-  
հետեւ իւր կեանքը քաղաքացիի, պաշտօնա-  
տարի և զիտանոյ կատարեալ տիպար մ'եղած  
է 30 միլիոն ժողովուրդ իւր մահէ պիտի  
ողբան: Միիթարուինք պարսններ, որ այս-  
պիսի մարդ մը մեզ թղթակից ունեցանիք, որ  
ամէն անզամ պաշտօնով Փարիզ եկած ժա-  
մանակ՝ մեր նիստերուն ներկայ գտնուելէ  
չէր պակասեր երբէք»:

Ցուղարկաւորութեան հանդէսն խիստ շքել  
եղաւ ի Փարիզ, կատարուեցաւ նման մի  
ֆրանսական նախարարի յուղարկաւորու-  
թեան:

«Քառաձի կառքի մը առջեւէն, որուն մէջ

դագաղն զրուած էր, զինորաց զունդ մը կը քալէր, ետեւն ՅԹ ի չափ սեւաթոյը երկծի կառքեր՝ հրացաններն դէպ ի գետինն խոնարհած զինուորներէ պատեալ. կառքերու մէջ իր բազմաթիւ և բարձրաստիճան բարեկամները յուղարկաւոր գացին մինչեւ Մօնմաթրի գերեցաննոցը. ուր առժամանակեայ կերպով աւանդատոն մը զրուեցաւ, և սուկից ապրիլ 25ին շոգեկառքիսազրուեցաւ. Աւանդատոնն զրուելու ժամանակ՝ ըստ հայաստանեայց արարողութեան աղօթքներ կատարուելէն ետքը, պարոն Նօկէս զամբանական ճառ մը կարդաց, անկից վերջն ալ՝ Վսեմաշուր գեսպան Ճէմալ փաշան» :

Պ. Նօկէսի ճառին օրինակն ձեռք չկրցանք անցունել: Ճէմիլ փաշայի զամբանականէն՝ յետագայ հատուածն արժան կը համարիմ յիշատակել աստ:

«Մահը Թուրքիայն մեծ քաղաքացի մը, Սուլթանէն՝ անհնուէր ճառայ մը, և մեզմէ ամենասիրելի բարեկամ մը յափշտակեց ճիշդայն միջոցին՝ երբ իւր երլրին իւստ կարեւոր պաշտօններէն մէկուն կոչուելով՝ իւր ընդարձակ հմտութեանց, և բարձր գաղափարացը առաւելութիւններն առատութեամբ պիտի բաժնէր իւր համաշխարհակիցներուն,

և Աղաթոն Էֆ.ի կեանքը բարւոյն զոհուած էր»: Մարմնոյն հետ՝ Պողիս եկաւ ֆարիզու Հայ հովին, Հայր Յովհաննէս Հինքեարապէյ Եստեան, մայիս Կին (Հ. Տ.): մարմինն կ. Պողիս կը հասնի Մարսիլեայէն. փոքր շուգնաւ մը կը փոխազրէ զայն ի Խասդիւզ, ուր գլուղին Ո. Ստեփաննոս եկեղեցին տարուեցաւ:

\* \*

Աղաթոն Էֆ.ի յուղարկաւորութեան հանցիսին, ըստ ժամանակին լրազրաց, աւելի քան ՅԹ հազար յուղարկաւորներ կային: Օտարազգեաց մէջ էին նաեւ ֆրանսայի գետպանն, Ապանիոյ գեսպանատան գործակատարը, միւս զեսպանաց՝ առաջին քարտուղարներն ու թարգմաններն: Բ. Դրան կողմանէ արարուապետ Ալի պէյը և այլք: Ներկայ էին նաեւ Թօսուն փաշա, Ժալուկ փաշա, սատիկանութեան, նախարարութեան՝ խորհրդական Մինիփ Էֆ. Ֆրանքօ Էֆ., պետական խորհրդապոյ անդամներէ ոմանք, հասարակաց շինուաթեանց, հեռազրաց և թղթատարութեանց բոլոր պաշտօնատարք, Յունաց ազգէն Բ. Միւղիւրիս պէյ, Ֆօթիստիս պէյ, Սթաւրաբի պէյ. Հրէից խախամազլուիը՝ 42 բա-

պիներով, Տաղիզօն էֆ. և այլ երեւելիք : Բ. Գրան կողմանէ խումբ մը զօրք և գաւաղներ, ոստիկանութեան դռնէն հարիւրաւոր ոստիկաններ :

Եկեղեցոյ մէջ՝ Պօղոս պատրիարքն կը նախագահէր, շըմապատեալ երեք եպիսկոպոսներէ, հինգ վարդապետներէ, և 24 քահանաներէ : Ներսէս եպիսկոպոսն՝ որտառուչ գամբանական մը խօսեցաւ : Դագաղը քառաձի կառքով դերեկմանատուն գնաց, գագաղի ծովերն բանած էին Ալի պէջ, Օտեան էֆ. Զամիչ Յովհաննէս էֆ. Համամճեան Սարգիս, Սերվիչէն էֆ. Ջրանքօ էֆ. :

Առաջքէն կ'երթային 400ի չափ զօրաց խումբ մը՝ հրացաննին դէպ ի վար բռնած ի նշան սպոյ, ետեւն երգեցիկ մանկունք, անոնցմէ ետեւ եկեղեցական դասը, յետոյ գագաղակիր կառքը, և ապա յուղարկաւորաց անթիւ բազմութիւն :

Շահնազար նուպարեան վարժարանի առջեւ՝ ուսանող մը՝ Յարութիւն Գալուստեան, Գրանսերէն մի զամբանական խօսեցաւ և նոճիի ոստ մը նուիրեց հանգուցելոյն դաշտին :

Բաղրամանաց եկեղեցոյ առջեւ զանգակներ կը հնչեցնեն : Հրեաններն երգելով ընդ

առաջ կ'ենեն : Գերեզմանատան մէջ զամբանականներ կը խօսին Սարդեան Յովհաննէս՝ տաճկերէն, Սերվիչէն էֆ. Գրանսերէն, Օտեան Գրիգոր էֆ. Հայերէն, հեռագրատանց պաշտօնատան առաջն բարտուղարն Սերբոս էֆ. և թղթատարութեանց երկրորդ տնօրիչն Վիթալիս էֆ. Գրանսերէն լեզուաւ :

Ներսէս եպիսկոպոսի, Օտեանի, Սերվիչէնի, Յ. Գալուստեանի զամբանական ճառերն կ'արմեն յիշատակել աստ :

Դամբանական Ներսէս եպիսկոպոսի թթ. 1.

» Օտեան Գրիգոր էֆ. ի » 2.

» Սերվիչէն էֆ. ի » 3.

» Յարութիւն Գալուստեանի » 4:

\* \* \*

Տեղական հայ թէ՛ օտարազգի մամուլն կենսագրական յօդուածներ, զրուատալից քրոնիկներ, և զրութիւններ հրատարակեց . յիշատակեմք միայն մի քանի օտար թերթերու գրածներն :

Լելանթ Հերալտ կ'ըսէր « Այս տարաժամահն խիստ ցաւալի է, և վստահ եմք որ պաշտօնական ակումբներուն՝ ինչպէս նաև հայ հասարակութեան մէջ՝ երկար ժամանակ

յարգանոք և երախտազիտութեամբ պիտի  
յիշուի Աղաթոն Էֆ.ի անունը։ Խոստովա-  
նիմբ որ՝ դժուարին է յաջորդ մը գտնալ այս-  
պիսի պաշտօնէի մը, և յուսամբ՝ որ կառա-  
վարութիւնն ամէն ջանք պիտի ընէ արժա-  
նաւոր յաջորդ մուտենալու այն կարեւոր  
պաշտօններուն՝ զոր կը վարէր այս փորձեալ  
ուզգութեամբ և արտաքոյ կարդի տաղանդի  
տէր մարզը»։

Հա թիշրքի կը զրէր. «Այս կորուսն ընդ-  
հանուր ցաւ պիտի պատճառէ։ Կառավարու-  
թիւնն Աղաթոն Էֆ.ի յաջորդ մը կրնայ  
գտնել, բայց տեղը բանով մը գտնելու դժուա-  
րութիւն պիտի քաշէ։ Քրիստոնեաներն պի-  
տի ցախն թերեւս, որ կառավարութեան պաշ-  
տօնէութեանց մէջ իրենց ընդունուելը սկսե-  
լու համար՝ Աղաթոն Էֆ.ի պէս տաղանդաւոր  
և մանաւանդ պատուաւոր ընտրելի մը չպիտի  
կրնան ներկայացնել։ Այս մահն՝ այդպիտի  
վայրկեանի մը մէջ զրեթէ հասարակային  
աղէտ մ'է։ Ասկէ լաւագոյն գամբանական  
չի կրնար ըլլալ»։

Երկար կը լինի հայ թերթերու մէջ եղած  
զրուատիքներն յիշատակել աստ՝ յորս նշա-  
նաւոր է մայիս 45ին Մասիսի մէջ տես-  
նուած Պարոյր ստորագրութեամբ քրոնիկն»։

Կ'արմէ սակայն ընդօրինակել աստ Թ. Թեր-  
զեան և Ե. Տէմիրճիպաշեան Էֆէնտիներու  
Մասիսի մէջ հրատարակած տաղաչափեալ  
ողբերն. և Գ. Վ., ստորագրութեամբ տաճ-  
կաբարբառ տեսրանն թռուցիկ թերթի մը  
վրայ հրատարակեալ, որ ժամանակ մը մեր  
աշուշուներու սովորական երգի նիւթն եղաւ։

Ողբ Թերզեան Էֆ.ի	Թ. 5.
Ողբ Ե. Տէմիրճիպաշեան Էֆ.ի	» 6.
Տէստան	» 7.:

\* \*

Գրիգոր Աղարոնի գրական աշխատասի-  
րուրիւններն. — Արգէն պատեհութիւն ու-  
նեցանք թուել իւր աշխատասիրութեանց մի  
մասն, որպէս.

ա. Կրինեօնի վարժարանի՝ իբր շըջան-  
աւարտ պատրաստած երկրագործական կա-  
րեւոր աշխատասիրութիւնն — որ զեռ կը մնայ։

բ. Այ մամայի երկրագործական վարժա-  
րանի համար պատրաստած երկրագործական  
դասընթացն, որոյ նիւթոց ցանկն միայն  
մնացած է։

գ. Թիւրէնի ցուցահանդէսին տեղեկա-  
գիրն, որ ամբողջ կայ։

դ. Երկրագործական տնտեսագիտութիւն՝ վերնագիր երեք յօդուածներու ձեռագրերն միայն մեր ձեռքն անցան, 1853ին զրուած հաւանականաբար, սոքա հրատարակեալ են Journal du Constantinopleի մէջ:

ե. Գուռապաղը տէրէի ազարակին մէջ մի երկրագործական վարժարան հաստատելու մասին՝ իւր պատրաստած ծրագիրն եւս ամբողջ կայ:

զ. Կ. Պոլսոյ 1863ի ցուցահանդէսին համար իւր աշխատութեանց մի մասն կայ միայն: — Յաւելումք այս յիշատակեաներուն վրայ և հետեւեաներն:

հ. Մեծ Եպարքոս Ալի փաշայի առաջարկին վրայ Աղաթոն էֆ. պատրաստած է մի տեղեկագիր՝ տաճկաստանի երկրագործութեան նկատմամբ, յորում երկրագործութեան վիճակն պարզելով՝ նորա բարդաւաճման նպաստելու համար առաջարկներ կ'ընէ: Աշխատութեանս զիսաւոր բաժանումներն են:

1. Les voies de communication.
2. La législation rurale.
3. L'enseignement agricole.
4. La réforme de l'impôt.
5. Crédit foncier.

6. Les institutions publiques pour encourager l'agriculture et en répondre les meilleurs procédés.

7. La colonisation agricole.

դ. Օսմանեան կայսրութեան մէջ հողային վարկ հաստատելու մասին մի աշխատասիրութիւն (անթուական):

ր. Կրծիկեանի շերամատածութեան գործին ալ աշխատակցած է, որպէս վկայէ կրծիկեան էֆ. նոյն իսկ այդ գործին մէջ:

ժ. Աղաթոն Էֆ. ի վուխ գործոցն է թուրքիոյ քաղաքական և երկրագործական տնտեսագիտութեան մասին զրած երկն՝ որոյ մասին իրեն հետ թղթակցող տնտեսագէտներու նամակաց մէջ՝ զրուատիք ու քաջալեր կը տեսնամբ. և որք անշուշտ իւր գործերէն, հանձարէն և տնտեսագիտական յօդուածներէն կոահած էին իւր պատրաստած գործի կարեւորութիւնն: Հարկ կը համարիմ այս գործի մասին Վելիօմ տնտեսագիտին 1866 հոկտ. 17 թուականաւ Փարիզէն իրեն ուղղած մի նամակի հետեւեալ հատուածն յիշատակել ասո. « Ecrivez-vous votre livre? je ne saurais trop vous y encourager, car je considère le succès

comme assuré. Il faudra l'imprimer en français à Paris, en même temps que en turc et en arménien à Constantinople, je suis toujours à vos ordres pour corriger les épreuves et faire des articles afin que vous obteniez une grande publicité en France, en Belgique et en Angleterre sans qu'il vous en coûte un sous...». իւր ընտանեաց անդամներն կը վկայեն՝ թէ վերջին անդամ Փարիզ երթալուն այդ գործն կազմու պատրաստ հետո տարաւ, անդ տպագրել տալու համար. սակայն չգիտեմք թէ ի՞նչ եղած է:

\*  
\*

Ազգային կեանք. — Ազաթոն էֆ. իւր վեհապետին ու երկրին ծառայելով հանդերձ մոնցած չէր իւր ազգն՝ որպէս երթեմն բարձրաստիճան պաշտօնեայներ, լաւ կը ճանաչէր մարդու մը առ իւր ազգն ունեցած պարագն, և ըստ այնմ կը ծառայէր շարունակ. «Քանիցս մեր ազգային քաղաքական ժողովյն անդամ, և երկու անդամ ընդհանուր ժողովյն երեսփոխան ընտրուեցաւ, Եկեղեցն վարժարանին վեհանձն պաշտ-

պան, Խասպիւղի թաղական խորհրդայն ատենապետն, թաղին բարերար և Նուպար-Շահնազարեան վարժարանի հաստատուելուն զլսաւոր պատճառն էր»: Այս վերջի նախագասութիւնն բացատրութեան պէտք ունի:

Ըստ Շահնազար Կարապետ անմահ և ազգասէր վարդապետի 1865ի կտակին՝ իւր թողուցած 1000 անդղիական ոսկին իւր տոկոսով 4000 ոսկոյ հասնելուն՝ կիլլիիոյ մէջ 40 աշակերտաց համար ժառանգաւորաց վարժարան մը սկիտի հաստատուէր: Նուպար փաշայ նուիրեց 3000 ոսկի, որպէսզի վարժարանն անմիջապէս բացուի, ապա Ազաթոն էֆ.ի առաջարկին վրայ որոշուեցաւ կ. Պոլոյ մէջ բանալ այդ վարժարանն, և ըստ կտակի 40 որդեգրեր առնուլ կիլլիիայէն. վարժարանն ունեցաւ ապա և թոշակեաւոր աշակերտներ՝ տարեկան 40 ոսկի վճարքով: Այս վարժարանի վերին հսկողութիւնն Ազաթոն էֆ.ի և Ներսէս Եպիսկոպոսի յանձնուեցաւ:

Ազաթոն էֆ. եղած է մին հիմնադրաց «Բարեգործական համազգային բարենպատակ ընկերութեան Հայոց», հաստատեալ 1869 հոկտ. 30ին, որ նպատակ ունէր «Ազգին որբ անտէր և չբաւոր տղաբր՝ երկրագործութեան ու արուեստից դրազեցնելու մի-



ջոցներն ի գործ դնել» . իրենց առաջին զործն պիտի ըլլար ընդարձակ հողեր գնել կիլի կիոյ կողմն , և անդ հաստատել մի երկրագործական վարժարան և տիպար աղարակ : Այս ընկերութեան անդամոց տարեկան բաժինն մէկ Օսմ . ոսկի էր :

Աղաթոն Էֆ . այս ընկերութեան ատենապետն էր , իրեն ընկեր ունենալով Գրիգոր Օտեան՝ փոխ ատենապետ , Պէշիկթաշլեան Մկրտչի Ատենապահը , Եռուսուփեան Տիգրան՝ փոխ ատենապահը :

Այս ընկերութիւնն 1868ին 2300 ոսկի ունէր . իւր հիմնագրի մահուանէ վերջ , ընկերութիւնը կորանցուց իւր փայլն , և շարունակուեցաւ կիսամեռ , մեղ ծանօթ է մինչ 1872ի մայիս 20 , յորժամ 3355 ոսկի ունէր , ի՞նչ եղաւ ընկերութիւնն , ի՞նչ եղան գրամմերն :

Ի Ս Գ Ա Լ Ի Մ Ա Հ

ՆՈՐԻՆ ՎԱՐԵՄՈՒԹԵԱՆ

Ա.ՂԱ.ԹՈՆ ԳՐԻԳՈՐ ԷՖԻՆՏԻԿԻ

ՊԱՇՏՈՆԱԿԻՆ ՀԱՍՏԱՐԱԿԱՅ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՌԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԹՎԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ,  
ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՈՐՈՒԹԵԱՆ

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍՔ

Ի Ա . Ե . Վ . Գ . Խ .

“ Կառարեալ ի սակառութ ելից զժամանակս  
երկայնս : ”

ԽԱՍԳԻՒՂ 9/21  
ՃԱՎԻ 1868

ԳԻՐՔ ԻՄԱՍՈՒԱՆ  
ՔԵՎԱ 4 , 15.

4 . Ահա մեր կասկածը ճշմարտեցաւ , ահա  
մեր երազները մթացան , ահա մեր վարանքը վերջացան , ո՞հ քանիցս սրաերնիս  
կը ճմլէր , քանիցս մոքերնիս կը թռչէին կեր-  
թային վսեմափայլ Հիւանդին քով , ո՞հ քա-  
նիցս օրհնեցինք այն ձողաբարձ թելերն որ  
կայծակի արագութեամբ յուսոյ նշոյլ բերին  
մեղի , եւ քանիցս վայեցինք նոյն թելերն  
որ այս սոսկալի բօթն ելեքտրական արա-  
գութեամբ մեր սրտերու հաղորդեցին :

Այս մեռաւ Նորին Վաեմաթիւն Ա. Ղ.  
Ա. Թ. Ո Ն Գ Ր Ի Գ Ր Լ Գ է Ն ա լ ի ն , Պ ա շ-  
տօնեայն հասարակաց շինութեանց , Ընդհա-  
նուր վերատեսուչ հեռազրութեանց եւ թըդ-  
թատարութեանց մեծի Պետութեանն Օսմա-  
նեան , Եւայլն Եւայլն : Խէ՛ք հոսանք ար-  
տասուաց թացէք այս վաեմ մարմինը , Ելէ՛ք  
հուաշանք եւ հեծեծանք Նորին բարեկամ  
սրաերէն , եւ նլ չ'է բարեկամ նորա , զի  
ամենուն էր նա եւ զամէնքը կը սիրէր ,  
ուրեմն լացէք դուք ամէնքդ եւ մենք ա-  
մէնքս՝ վասն զի արգարացի են այն հօձ  
արտասուք որ նորա դագաղը կ'սուզեն :

Այս ախուր ժամուս երբ մեր ակնկալու-  
թիւններն ի գերեւ ելած են , երբ փոխա-  
նակ մեր ամենասիրելի եւ պատուական վ .  
աղջայնոյն , Տէրութեան եւ Ազգին նազե-  
լոյն բարենշան զալուատը շնորհաւորելով  
անոր բարձր պաշտօններուն վրայ յաւելցած  
բարձրագոյն նոր Պաշտօնէութեան վրայ առ  
հասարակ խնդակցելու , նորա կանխահաս մա-  
հը ողբալու եւ ի մէնջ սարաժամ անջա-  
տումը ոգալու կը պարտաւորիմք , երբ փո-  
խանակ զինքը ողջամբ անսնելով իւր սիրա-  
սուն զաւակաց զիրկը առաջնորդելու՝ նորա  
սիրատեսիլ դագաղը արտասուօք կը նշմա-

րենք , եւ լալօնիւք գէպ ի գոց շիրիմն կը  
յուզարկաւորեմք . ով սիրելի եղարք ի վրիս-  
տոս , ով պիտի միսիթարէ զմեզ այս ան-  
դարմանելի կորուստին համար , ով եւ ի՞նչ  
բան կարող պիտի ըլլայ նորա սիրասուն ըն-  
տանեացն՝ մատաղերամ որդւոյն եւ մաերիմ  
բարեկամացն ի բոց մղեղեալ սիրաերն զու-  
վացնել ... Ո'չ ոք բաց ի բէն , ով հոգի՞դ  
միսիթարութեան , այս , զու միայն այն վաեմ  
տապանագիրով զոր մեծ իմաստնոյն ներշըն-  
չեցիր իխօս կանուխ զրել վազամեռիկ ար-  
զարյն գերեզմանին վրայ , « Կատարեալ ի  
սակաւուն ելից զժամանակս երկայնս : »

Ուրեմն զազրեցուցէք սակաւիկ ինչ ձեր  
հեծեծանքը , ով բարեկամք ամենասիրելի  
բարեկամին մերոյ , զազրեցուցէք ձեր հա-  
ռաշանքը որպէս զի կարող ըլլամ ինքինքս  
ինծի գէմ զօրացնելով արտասանել , վաե-  
մափայլ Ա. Ղ. Ա. Թ. Ո Ն Ե Ա Ն ։ Գ Ր Ի Գ Ո Ո Ր Լ է Փ է Ն-  
տիին տապանագիրը : « Կատարեալ ի սակա-  
ւուն ելից զժամանակս երկայնս » . Այս է  
մեր միսիթարութիւնը , զի եւ այս է նորա  
փառքը , ուստի եւ ուշագիր ըլլանք եւ աես-  
նենք թէ նորա տապանագիրը , որ իր կենաց  
համառօտաւթիւնն է , ի՞նչ ազգու գասեր կու-  
տայ մեզ : Մահը Աստուծոյ վճիռն է , մահը

բնական եղած է, բայց ասի՛, ո՞հ ասի տառաժամ մահ է, մահու մանգաղը մեր դաշտին ամենէն ընտրելագոյն եւ հազուազիտ ծաղիկներէն մին, եւ ամենէն գեղեցիկ պտուղը հնձեց, մենց գեռ չ'վայելցինք զայն, կանուխ մեռաւ, կանուխ, 44 տարեկան, մեղի անհանգուրծելի ցաւ... բայց իրեն անզուգական փառք, մեր սիրտն կոկծազին կերպով կը տուրի, բայց եւ այնպէս անոր յիշատակն ասովլ իսկ կը փառաւորուի, վասն զի մեռաւ կանխաւ կատարելագործուելով։

Այս, ոչ երկար՝ բայց յոյժ րեղմանար կեանքը ծայրէ ի ծայր, բոլոր Արեւելից նամանաւանդ Հայոց Երիտասարդութեան մշտատեւ յարացոյց մ'է կատարելութեան։

Ծնաւ յամի Ցեառն 1823 ի Խասպիւղ, առաքինի, բարի, բարեսպաշտ, պատուաւոր եւ աշխատասէր ծնողըէ, իր ծնողաց զործը պարտիպանութիւն էր, նա իր առաքինի պապուն, հօրը եւ հօրեղբօր առաքինի ու պարզ ճակատներնուն վրայ թափուած քրտանց կաթիւներէն ճաշակեց աշխատասիրութեան բաղցրութիւնը, եւ անոնց յաշխատութենէ փապարեալ ձեռքերնուն տակ տատասկաբեր հողին պտղաբեր դառնալէն աշխատութեան մեծութիւնը սովորեցաւ անլստին յանտիական

հասակէն։ իր վարժապետը բնութիւնն էր նա իր ծնողըէն կորստական ոսկւոյ եւ արծաթոյ աեղ՝ անկորնեցի առաքինութիւն ժառանգեց. ուստի սիրեց առաքինութիւնը եւ աշխատութիւնը : Խասպիւղի Ներսիսեան վարժարանի աշակերտ եւ բարեկիշատակ ձեզայլուեան Մկրտիչ Ամերայի որդեզիր եղաւ. ձայնը խիստ գեղեցիլ ըլլալով, եկեղեցին դպրութիւն ալ կ'ընէր, կատարելութիւնը այն ժամանակէն սկսաւ երեւալ վրան, վասն զի իր ձայնին գեղեցիկութեանը համար իրեն եղած արտաքի կարգի պատիներէն եւ գովութիւններէն չը շանար, ուսման փափաքող էր, ուստի եւ քիչ ժամանակուան մէջ բաւական յառաջաղիմութիւն ըրաւ Հայ. Գաղ. իտալ. լեզուներու եւ մաթեմաթիբական ուսմանց մէջ. ամենայն ոք կ'ըսէին թէ մեծ մարդ մը պիտի ըլլայ ժամանակին, ուստի եւ ամենայն ուսումնասէր անձննք կը սիրէին զինքը. 1841 ին Բարերարը՝ որ զիտէր հանճարը քաջալերել՝ զինքը Գաղղիա կրինեօնի երկրագործութեան գալուցը զրկեց, ուր յաջողութեամբ պատկուեցաւ. զաշտի աշխատութիւնը սովորելէն յետոյ քաղաքային աշխատութեան անցաւ. քաղաքական անտեսութիւն եւ զանձային զիտութիւն սովորեցաւ :

ինչպէս հողը փուշեր՝ նոյնպէս ալ մարդկաւ յին ընկերութիւնը գժուարութիւններ եւ զեղս ծումներ ունի զօրս պարզեց եւ յատակել պէտք է, հողը մշակուելու եւ մարդկային ընկերութիւնը կատարելագործուելու պէտք ունի, ուստի անձնանուիրութիւն եւ աշխատութիւն կամ անշահամնդրութիւն եւ յարատեռութիւն ու լայնախորհուրդ երկայնմտութիւն, եւ կամ միով եւ եթ կատարելութիւն պէտք է:

**Ա.Վ.Թ.ՈՒ** Եփէնակն զանազան գժուար եւ փափուկ պաշաճններ ունեցաւ՝ զորոնք վարած ատենն այս կատարելութեան հանգաւ մանկը փայլեցան իւր վրայ: Փարիզէն վերաբաշը 1847 ին եղաւ, 1848ին թէշիս Բաշային կամօքն Այստէփանովի տիպար ազգարակին Ցեսուչ եւ երկրագործութեան զպրոցին բարձրապայն դասուն Գաստու կարդեցաւ:

1862 Տար իւլ Գինուն թղթակրամոց բարձմանը հաշուակալութեան տնօրէն եղաւ:

1864 հաշուակալութեան ատեանին անզամ, ու ասկէց յառաջ եւ ետքը տէրութեան զանազան յանձնաժողովոց անդամակցութիւնն ունեցաւ:

1865 Քօնովլիտներու փոխարկութեանը կառավարութեան կողմէն Տնօրէն, եւ Օս-

մանեան, ընդհանուր հեռագրութեանց Տնօրէն եղաւ:

1866 Օսմանեան թղթատարութեանց Ընդհանուր անօրէն, եւ այս տարի Հասարակաց շինուաթեան Պաշտօնեայ անուանեցաւ:

Արտեհնիպայի արուեստահանդէսին մեր տէրութեան կողմէն ներկայացաւ յատով պաշտօնվ : 1866 ին, համազգային հեռագրական տարեկան խորհրդայ մէջ Օսմանեան տէրութեան իրք ներկայացուցիչ գնաց Փարիզ անցեալ 1867 ին դարձեալ նոյն խորհրդայն ներկայ գտնուեցաւ :

Քանիցս մեր Ազգային Քաղաքական ժողովյա անդամ եւ երկու անդամ ընդհանուր ժողովյա երեսփոխան ընարուեցաւ: Ներսիսեան վարժարանին վեհանձն պաշտպան, Խասդիւղի թաղական խորհրդայն Ատեհնապետն, թաղին բարերարն եւ Նուպար-Շահնակարեան վարժարանին հաստատուելսն զըլիսաւր պատճառն էր, եւ իր մեծամեծ զբաղրանց մէջ՝ անսնց վրայ հոգ կը տանէր ոչ միայն մօտէն այլ եւ հեռուէն . Բարեգործական Համազգային բարենսպատակ ընկերութեան անզամ, եւ անոր զարգացման նախանձախնդիրներէն մին . եւ այս ամէն գործոց մէջ ցուցամոլութիւն չունէր . Վսեմ .

ԱՂԱԹՈՒՆ Եփէնախն արտաքնայարդար ցոյցից աւելորդ կը համարէր, նա ձեւամոլչէր, Տէրութեան եւ Ազգին իրական օգտին նախանձախբնդիր ըլլալով՝ ձեւերը բուն օգտին կը զոհէր. նա խորհրդոյ մարդ էր եւ ոչ երեւակայութեան, կատարելութեան ողին կը գործէր անոր մէջ, ուստի աւելորդաբանութիւն եւ աւելորդ զարդ, ոչ իր խօսքերուն ու խորհրդոյ եւ ոչ իր անձին ու կենաց մէջ կը գործածէր. իրեն վրայ փառք ու մեծութիւն չէին ներզործեր. իր հետ կենակցաղներէն շատերը շգիտեն թէ բանի շրանըշան ունի, վասն զի իր վրայ կրելը տեսնող հազիւ թէ կը գտնուի, թէ պէտեւ իր արժանաւորութիւնը հանցուած էր ոչ միայն Յսմաննեան՝ այլ եւ Գաղղիոյ, Անդիիոյ, Ռուսիոյ, Խալիոյ, Աւարիոյ, եւ այլ Տէրութիւններէն՝ որանք բարձր պատուանշաններով մինչեւ մահուան մահձին մէջ զինքը կը պատկէին :

Կատարելութեան ողին կը գործէր ի նմա, նա կը մերծէր ամէն շաղողուն տեսութիւն, եւ պարզապէս գործադրելիին սիրահարն էր. նա գործել կը սիրէր բան թէ խօսիլ. աղմուկչէր ուզեր, կատարելութեան ողին փորձառութեամբ զարդացած էր ի նմա. կատարեւ

լութեան ողին կը գործէր անոր մէջ վասն զի յանձնապաստան չէր. նորա բալվանդակ կեանքը ուսանողի կեանք էր. իր կարծիքը լաւագունին անտըրտունչ տեղի կու տային երրեմն. կատարելութիւն ստացած էր նա, վասն զի կատարեալ տնտես, պարզասէր, փորձառու, մարզասէր եւ ազգասէր էր. իր անձին եւ Ազգին նկատմամբ Ջուանքինի աշակերտ էր: Զէ թէ ինք փառքի՝ այլ փառքը նպա ետեւէն կ'երթային. վասն զի ինք փառքէն մեծ էր, վասն զի իր փառքը, իր պարկեշտութիւնը, խոհեմութիւնը եւ պատիւն էր. չէ թէ մեծնալու՝ այլ կատարելութեան հասնելու թեկին ածէր, «Ե՞ն որ մեծացուցանեն զանձինս, եւ ոչինչ ունին, եւ են որ խոնարհեցուցանեն զանձինս եւ լի են մեծութեամբ բազմաւ.» Սող. առակը :

ԱՂԱԹՈՒՆ Եփէնախն հարուստ չէր, եւ երբէր չէր կրնար լինել, վասն զի եւ պէտք ալ չէր զգար հարստանալու. հարստութիւնն իր սակաւապետութիւնն էր: Նա թագաւորութեանց, հարուստաներա, եւ միանգամայն ազգատներու առ հասարակ վստահութեան արժանի մարզն էր. նա իր կարձ կեանքին մէջ աշխատութեան մարմնաւորութիւնն եւ Հայոց ազգին առ Յսմանեան պետութիւնն ու-

նեցած դարաւոր անկեղծ հաւատարմութեանն  
անձնաւորութիւնն էր :

Այս ամէն ընտիր հանգամանքներն , այս  
մեծ մարզւն գերեզմանին վրայ թափուած  
արտասուբը միթէ չե՞ն արդարացներ... Օս-  
մաննեան բարեխնամ ջէրութեան հյակապ  
նախարարաց՝ նորա վրան ունեցած անսահ-  
ման վստահութիւնը , Եւրոպայի վեհապե-  
աց , բաղաքաղիսաց եւ գիտնականաց զո-  
վեսաներն , իր ըրած գործերն ու Հայոց Ազ-  
գին եւ մասնաւորապէս Խասդիւղի ժողովը-  
գեան երախտապարտ սէրը եւ առ հասարակ  
նորա ամենէն ողբացեալ մահը՝ անոր մեր  
կարեւորութեան մարգն ըլլալը միթէ չե՞ն ա-  
պացուցաներ . ուրեմն շատ երեւելի պէտքի  
մարդ մը պակսեցաւ մեզմէ . այս պէտքը ովլ  
պիտի լեցնէ... Եթէ Եւրոպական լրագիր-  
ները աճապարեցին ըսելու՝ թէ զժուար պիտի  
գանուի Տէրութեան գործոց նկատմամբ՝ տե-  
ղը բռնող մէկը , հասա մեր Ազգին նա մա-  
նաւանդ այս զժբաղդ թաղին եւ սիրասուն  
ընտանեացն եւ աղջականաց մէջ ո՞րչափ մեծ  
պակաս մը կը թողու նորա մահը . անդար-  
մանելի կորուսա . ողբալի եւ սգալի մահ...  
Որդարեւ ինք իրեն բաւական է , վասնզի՝  
«Կատարեալ ի սակաւուն ելից զժամանակս

երկայնս : » Բայց մենք մեզի առանց անոր  
անբաւական եմք... Սակայն թողունք որ  
հանգի այդ վաստակաբեկ ամնը . նա հանգս-  
տեան պէտք ունի , եւ անոր աշխատութեանց  
ու յօդնութեանց համար յաւիտենական հան-  
գիստ պէտք է . անվորով խազազութիւն եւ  
անսահման փառք . վասնզի երկրաւոր փառ-  
քերը չէին ազգեր իրեն վրայ , «Փառք պաշ-  
տիւ եւ խազազութիւն ամենայնի , որ զործէ  
զբարի» (Հոռվմ. Բ. 10) մաղթեմք միսիթա-  
րութեան ամենազօր Հողիէն՝ որ հանգուցե-  
լոյն կատարելութեան դարուց ի զարս տե-  
ւելու փառքը՝ ԱՂԱԹՈՒԵՅՆ Առաքինի  
գերզաստանին յաւերժական միսիթարութիւն  
ըլլայ , Ամէն :

---

Օտեան Գրիգոր էֆենտի բարաֆլնտան  
միշրէվէտա Աղարոն էֆենտի հազգընտա ի-  
րաւ օղունան նորքոռն սուրէրի .

2. Այս մարզը՝ որուն այս բազմութիւնը մարդ-  
կութեան ու բարեկամութեան յիտին մեծա-  
րանքը մատուցանելու եկած է , ընդհանուր  
համակրութեան փառաւոր ցոյցերով շրջապա-  
տեալ կու գայ մեր մէջ , փառաց բարձոնքէն  
իր ընտրած համեստ զիւղին համեստ զե-  
րեզմանատանը մէջ իջնալու համար : Փառաց  
կոչեալ չէր 'ի ծնընդինէ Աղաթոն էֆէն-  
ախն , աշխատութիւնն ու գիտութիւնը բար-  
ձրացուցին զինքը . իր առաջանդով՝ Տէրու-  
թեան պաշտօններու մէջ մինչև հիմա քրիս-  
տոնէից անմատչելի բարձրութեան մը հասաւ .  
իր քնաւորութեամբը ընդհանուր հասարակու-  
թեան սիրելի անձն եղաւ և սկզբունքներովը  
իր ազգին յառաջդիմութեանը ծառայեց :

Թող ուրիշները յակճիռս մնան իր փառ-  
քին առջին և իր տաղանդն ու բնաւորու-  
թիւնը զրուատեն . իսկ ես որ շարունակ տասն  
և չորս տարի իրեն հետ գաղափարաց հա-  
ղորդակցութեան մէջ ապրեցայ , իր գերեզ-

մանին վրայ՝ կ'ուզեմ միայն հոչակել՝ ինչ  
որ իր կեանքին մէջ մասնաւոր սիրով սի-  
րեցի՝ իր սկզբունքները : Շատեր կան որ  
սկզբունք ունինք կ'ըսեն , այլ քանիներ կան  
որ կը գեղեւին : Աղաթոն էֆէնտին ամեն  
պարագայի ու ամեն վիճակի մէջ հաւատա-  
րիմ մնաց իր սկզբունքներուն , և միայն 'ի  
պահանջել հարդին արտաքին ձեւ միայն զո-  
հելով անսասան կեցաւ իր ներքին համոզ-  
մանցը մէջ : — Ոչ որ աւելի դրական կեր-  
պով կ'ըմբըսնէ ազատութեան յարդն և ար-  
ժեքը՝ քան տնաեսագէտ մը : Աղաթոն էֆէն-  
տին այս զիտութեան ուսմանը մէջ որ իր  
կեանքին մեծ մասը զբաղեցուցած է՝ քաղեց  
իր բոլոր պյուր ազատութեան հաւատալու համար :  
ինք այն մարդոցմէն չէր որ վերացեալ  
բանի մը համար կը վառվին . չունէր իր ներ-  
սի զին այն անզիմազելի խանգը որ խոր-  
հրդագածութենէ առաջ կ'անցնի և որ ապա-  
ցոյց շըբնտուեր հաւատալու ու յարելու հա-  
մար . իրեն համար ազատութիւնը թուաբա-  
նական ճշմարտութիւն մըն էր : — Աղաթոն  
էֆէնտին պատմութեան իմաստասիրութենէն  
քաղած էր ոչ նուազ նուիրական սկզբունք  
մը՝ այն է յառաջդիմութեան սկզբունքը .  
մարդկութեան ընթացքը պատմութեան մէջ

անյարիր և աղիսազուրկ զիսպուածոց շարք մը  
չէ : Մարգիլութիւնը վայրենութեան վիճակէն  
սկսելով միշտ լաւագոյն վիճակի մը զիմած  
է և իւրաքանչիւր զար մարդկային յառաջ-  
դիմութեան այս մեծ զործողութեան մէջ իր  
բաժինն ունեցած է : Այս ճշմարտութենէն  
կը ծաղի իւրաքանչիւր մարգու համար պար-  
տաւորութիւն՝ մարդկութեան յառաջիմու-  
թեանն աշխատելու, առանց հայրենիքի ու  
ազգի խարութեան : Սոյն սկզբունքները՝ ո-  
րոնց երրէք չստեց Ազաթոն էֆէնտիին կեան-  
քը, զիացաւ նա վերածել նաև ազգային  
վարչութեան վերաբերեալ խնդրոց, և այս  
մասին մատուցած ծառայութիւնքը չպիտի  
մոցուին : Ուրիշ ծառայութիւն մը՝ որ մա-  
նաւանդ իր նոր ընդունած պաշտօնէն ետև  
պիտի կրնար մատուցանել, այն է որ ինք  
մեծապէս պիտի նպաստէր հայերը որ օրի  
ամելի սիրելի ու յարգելի ընելու ջէրու-  
թեան առջև... : Բայց իր պաշտօնական ըն-  
թացքին երբ նոր բարձունքն էր թեակիսած,  
երբ այնքան աշխատութեան լիովի վարձքը  
կ'ընդունէր ճշմարտապէս ազատամիտ վեհա-  
պետէ մը, անոր խորհրդոցը մէջ բազմելու  
մեծ պատույն արժանանալով, և երբ ընդ-  
հանուր հասարակութիւնն իսկ ու Եւրոպա ե-

ունդազին ծափահարութեամբ կ'ողջունէր իր  
ընտրաւթիւնը, և իր սիրելի ազգն ու բազ-  
մաթիւ բարեկամները ինչպէս նաև ջէրու-  
թիւնն անհամբեր կը սպասէին իր փառաւոր  
դարձին, և ահա՛ անողոքելի անդութ հիւան-  
դութիւն մը երեք ամիս չարաշար աանջելէն  
ետև զինքը, Խլեց կորպեց բոլորվին և այն-  
քան մեծութենէն աճիւնը միայն թողուց աշ-  
խարհի վրայ : Ազաթոն էֆէնտիին ոչ ևս է... :

Ասանկ ահա աշխարհիս սկիզբէն՝ 'ի վեր  
ընդհանուր անվերջանալի հոսանք մը կը քշէ  
կը տանի ինչ որ կը ծնի. փառք, մեծու-  
թիւն, տաղանդ, ինչ բանի որ կը յարի  
մարզս, ամեն բան կ'ոչնչանայ. աւերակը ա-  
ւերակաց վրայ կը գիտուին և ընդհանուր  
հեծութեան ձայն մը շուրջ կը պատէ մեռելոց  
և կենզանեաց բոլորտեքը, և փոքր մի ևս  
և ահա Տիեզերք անզամ, այնքան էից ու  
էութեանց բնակիարանն իր անթիւ լուսաւոր  
աշխարհներովը և անսահման հիանալեօքը,  
այն ևս անհետանայ թերևս... : Ի՞նչ պիտի  
ըլլայ մարզս, այն որ իր ասլլելուն զիտակ-  
ցութեամբը ապրեցաւ, ներքին մարզը որ իր  
իզձերուն սահման չհանչցաւ այս աշխարհիս  
վրայ : Ո՞վ իմ բարեկամն որ հոս անշունչ  
զիտինացեալ կը կենաս մեր աշաց առջեւ,

ես զքեզ չեմ նկատեր չեմ կրնար նկատել իբրև մեռեալ բոլորովին : Աննիւթական մաս մը կայ ի քեզ որ կենդանութեանդ կը լուսաւորէր քու զգացմոնդպ ու մտածութիւններդ և որ միայն կարող էր գեղեցկացնելու քու մաքի ու սրտի յատկալիւններդ , անի ճաճանչ մըն էր 'ի քեզ անսպառելի յաւիտենական լուսոյն , որուն կ'երթայ անտարակոյս խառնութիւն հոգին՝ յետ մահուան մարդուն :

Եւ ՄԵՆՔ քու բարեկամներդ , և անոնց մէջ զոր խանդակաթ սիրով սիրեցիր տասնուշորս ամաց հետէ և որուն պահուած է եղեր այս գանձ փորձն ալ քու գերեզմանիդ վրայ իր անդօր բերնովը արտասանելու այս գուն խօսքերը , մենք զորս որբ ձգեցիր 'ի քո սիրոյդ , մեր վերջին մնաս բարովն ըսելով քեզի , այս միանկ միմիթարութիւնը կը տառինք մեր հետ և քու յիշատակդ մեր կենաց մնացեալ օրերուն ընկեր :

Ահաւասիկ հանգուցեալ Աղարոն էֆէնտիի զերեզիւնին վրայ վսեմ . Արովիչէն էֆէնտիի խօսած դամբանականին բարգմանուրիւններ :

« Յ . Յաւիտեան կոկծալի բարեկամի մը ոտքին ներքե զերեզմանը բացուեցաւ . Իր անշունչ մարմինը հոն իջեցուցած ժամանակ ամեն կողմէ բարձրացած չերմ համակրութեան խօսքերը բաւական են հասկըցնելու թէ որչափ մեծ կորուստ մ'ըրինք մեր սիրելի Աղաթոն էֆէնտիի մահուամբ :

« Իւր անձնական արժանեօք միայն մեծցած մարդ , բարոյական կարգին մէջ ամենավոեմ զգացմանց օրինակ մ'եղաւ : Իր կեանքը մտածութեան շահաւէտ նիսթեր կ'ընձայէ :

« Յառաջացեալ երկրի մը մէջ կըրթուած , կրցաւ իրեն վայլած տեղը զրաւել այս երկկրին մէջ . այնակիսի ժամանակ մը , ուր ամեն կողմէ պահանջումներն իրարու դէմ կ'ելնեն , ուր շահերն իրարու կը բաղսին , ուր ամեն բան կերպարանափոխ կ'ըլլայ , կարող եղաւ ամրաքայլ յառաջ երթալ՝ առանց մէկ կամ միւս կողման ծառայ ըլլալու , և միանգամայն ինքզինք ամենուն ընդունելի ընել :

« Խոհական մագի տէր, հաստատուն և զանազան հմտութեամբք ճոխացեալ, զարմանալի չէ որ մեծամեծ ծառայութիւններ մատուցած ըլլայ իր աղջին, կառավարութեան և երկրին։ Բայց զարմանալին այս է որ բնաւ երբեք, մինչև անդամ մեր շնորհալի վեհապետին կողմէն նախընթաց չունեցող չնորհի մը արժանացած, միով բանիւ իր ասպարէզը փակող պայծառ զիրքին հասած ժամանակ՝ իր բոլորտիքը մախանք կամ նախանձութիւն չզբուեց. խիստ հազուազէպ օրինակ, որ չկրնար իր անժխտելի արժանեօք միայն մեկնուիլ. քանզի Աղաթոն է վիէնախն փոխանցութեան ժամանակի մը յարմար եղած հոգին ունիր, այն է զերազոյն ասափիմանի չափաւորութեան և հաշտասիրութեան հոգին։ Աղաթոն է վիէնախն օրինակ մ'է այն ամեն անձանց՝ որը անկիզմաքար կ'ուզեն յառաջդիմութիւնը պատուաստել մերինին պէս երկրի մը մէջ, ուր յաջողութիւնը չափաւորութեամբ միայն կրնայ ձեռք բերուիլ։

« Բայց ես առաւել կարող ձայներու կը թողում մի առ մի յիշել մեր ազնիւ և ամենասիրելի բարեկամ Աղաթոն է վիէնախի քաղաքական կենաց պարագաները. ըստ իս' անոր ամենէն մեծ յատկութիւնը, որ իւր

բարեկամները կը փղձկեցնէ և ինձ համար ալ անզին արժէք մ'անի, ոչ այն գեղեցիկ հանձարն է՝ որով բարեմասնեալ էր, ոչ զիտութիւնն է՝ որուն արժանի ներկայացուցիչն էր, այլ նոյն իսկ մահը։ Իր մահն անշուշտ ամենուն համար ցաւալի զէպք մ'է. բայց մեզ համար, որ զինքն իր երիտասարդ հասակէն ճանչցած, կենաց ամեն փորձերուն մէջ տեսած, յաճախ իւր ամենէն ազնիւ յատկութիւնները հասկնալու առիթն ունեցած էինք, իւր մահը ճշմարիտ զդրազգութիւն մ'է։

« Աղաթոն մեզ համար ինքնին բարեկամութիւն ու ազնիւ բարեսրտութիւն մ'էր։ Ասիկա գառն բաժանման մը կսկիծէն յառաջեկած ունայն գովեստ մը չէ, այլ զուտ ճշմարտութիւն. վլայ կը կոչեմ զանոնք որ զինքն՝ ի մօտոյ զննած են։ Աղաթոն բարոյն հաւատքն ունիր, և զայն իւր բոլոր կենաց մէջ գործադրեց. այն կեանքը՝ կրնայ ըսուիլ թէ զլիսալին պարտուց կատարում և անձնուերութիւն էր։

« Մնաս բարեաւ, աղնի՛ւ և ամենասիրելի բարեկամ. բու յիշատակլոր պարկեշտութեան, բարեգործութեան և զոհողութեան օրինակ մ'է, զիշել պիտի գորացնէ կենաց փորձութիւններուն մէջ. Մնաս բարեաւ, կամ մանաւանդ՝ ի կրկին տեսութիւն։ »

Յարուրիւն Գալուստեան ժառանգաւորը ,  
ամենէն յառաջադէմ աշակերտներէն մելլ ,  
գաղղիարէն շեղուով ուղերձ մը կը կարդար  
'ի դիմաց իշր լմէկերակցացը , որոյ հայե-  
րէնը ահաւասիկ .

« 4 . Մեծանուն եւ վաեմափայլ սիրելի

« Այն վայրկենէն յորում զմեզ յափտեան  
կը թողուս , կուզանք մեք քեզի տալ մեր  
հրաժարական ողջոյնը , առ որ կը յորդորեն  
զմեզ երախտակէտ սրտերնիս : Ոչ եւս կաս  
զու աշխարհիս մէջ . բայց յիշաակդ կ'ապրի  
ու պիտի ապրի այս յարկին ներբեւ՝ որոյ  
զու ալ բարերարն եղար :

« Բոլոր կենացդ մէջ շահաւէտ նպատակաց  
վրայ բարիքներդ սփոելու մտադիր , դու ազ-  
նուապէս օճանակեցիր Նուպար—Շահնազա-  
րեան վարժարանին առաջին հիմնադրաց ջան-  
քերուն . թոյլ տուր ուրեմն որ այսօր միա-  
հազոյն տրամութեամբ քեզ նուիրենք ձօնու  
երախտագիտութեան :

« Նախախնամութիւնը մեր խանդադատան-  
քէն վերցուց զբեզ այն միջոցին՝ երբ առա-  
ւել քան զերբէք մեզմով կը զբադէիր , մի՞  
զուցէ աւելի դիրաւ պաշտպանութիւնդ շա-

րունակելու մտօք՝ երկնից բարձունքէն ու-  
թուած է քու գեղեցիկ հոգին . այս մածրտ  
մունքն ալ չոնենայի՞նք ցաւերնիս քիչ մը  
մեզմացունելու համար :

« Մեր սիրելեաց մահը բոլորովին անյոյս  
չթողուր զմեզ . զիտենք թէ յափտեական  
երանութեանց մէջէն ալ կը յիշեն նոքա  
զով ոք սիրեցին այս երկրին վրայ :

« Շարունակէ միշտ պաշտպանութիւնդ այն  
երանական կայանէն ուր մասար , ո՛վ զերեր-  
ջանիկդ հոգի , եւ համէ որ 'ի ցոյց երախ-  
տագիտութեան՝ զոր մեր սրտից մէջ տպա-  
ւորեցիր , բոլոր ընկերակցացս կողմէն տա-  
րածեմ գագազիկ վրայ այս մշտագալար սստը՝  
նշանակ անմահութեան : »

## Ի Մ Ս. Հ.

ՎԱԵՄԱՇՈՒՐ Ա.Դ.ԱԹՈԽ ԳՐԻԳՈՐ ԷՖԵԿՏԻՒ

## Ա.

5 . Զի՞նչ . Ողիդ զու գեր 'ի վեր  
փոթորկայոյզ կրից երկրի  
Որ նշուլիք ճշմարտութեան  
պսակագեղ փայլակէիր ,

Եւ ըդթե՞ղ սևափետուր  
 բազուցին թեք մահու . . .  
 Քաղասաւորք շանթառաքք  
 քայոց երլեմն հրամանաց  
 Հողմակոծ ընդ ալեօք  
 սլանան արդ թեք և ընդ լերինս  
 Ի բարբառ փայլակնացայտ  
 տարիողելով ըզզոյժ մահուր :  
 Ի' Սենայ մինչև ցԱրաքո՞  
 հծծեն լալօնք և հառաշանք .  
 Դու միպյն՝ վսեմ ողի  
 անդորրաքայլ յառաջ մատչիս  
 Ծնդ դամբանին կամարակապս  
 Յաւիտենից անդր 'ի Տաճար . . .

## Բ.

Իմ' ի սեամսդ առեալ զկայ՝  
 դէտ ակն 'ի քեզ կամ և յերկին  
 Եւ ցընորք՝ մութ ուրուականք՝  
 ճախրեն ընդ միտս իմ թեարախ .  
 Յո՛ր բարձանց ըստորանկեալ՝  
 քանի՞օն փոյթ՝ և առ իմէ՞ .  
 Ըզմէ՞ քեզ՝ սստղ՝ շողալ,  
 թէ մօտալուտ այսափ էր վիհ .  
 Աւաղիկ նաւահանդիսան :  
 Պաստառալիր ու անդնդահերձ

Հանճարով տկաղձուն  
 ծովաշուէիր ասաէն՝ ո՛ նաւ՝  
 Ծնդ անծանօթ աստեղօք՝  
 և զիմազրաւ մութ կոհակաց .  
 Ցուսալից ամենելեան  
 կային 'ի քեզ անկնկառոյց :  
 Դու ծովամոյն գնաս անյողողգու՝  
 Եւ մինչ հետոցդ յալիս կամք զէտ՝  
 'ի տարրանիմթ պատենէն զերծ՝  
 ըզքեզ յերկինըս նշմարեմք  
 Ուստի ևս յստակագոյն  
 փայլատակեն բո ծաղկապսակր .  
 Ո՛վ ժամանակաց  
 անհան հօսանք՝ անդունզք անլոյս ,  
 Ուր պետութիւնք՝ կոհակը կոծեալք՝  
 ահեղագոչ խարզաւանին  
 Եւ ինդութեանց վարգք՝ և ցաւոց  
 տասասկը՝ ալիք՝ ժպիտք՝ ծաղկունք  
 Հսուին յախուռն անդ մղեալք՝  
 'ի սառնասոյր զառըն հողմոյ  
 Որ շնչէ 'ի լայնբերան  
 Գերեզմանին անձաւաց ,  
 Եւ զորովք՝ սեաւ պատանք  
 Մսոացութեան թեք պարառեալ  
 Զըներեն իսկ սիրելեաց  
 զամ մի պարզել զայն և հայել ,

Տուք ինձ՝ Դարք՝ պատասխանի,  
զի՞նչ զայսգունակ աւարն առնէք :  
Աւաղիկ ձիւնաթեօք  
ցելեալ զերկինս Զուարթուն՝  
Եւ յալուց ամպարագիր  
ժամանակաց Ովկէանուն  
Մատնանիշ ինձ ցուցանէ  
վերասլացեալ զԱռաքինին՝  
Ըստահակ մըրըրկաց  
զեր՝ ի վեր ասաբդ լուսաշող :

Գ.

Ոչ ըղնինջ քոյին խոռվել  
եկեալ կամ այսր արտասուելով,  
Զի ոչ շիրմիկ լալօննը են պէտք՝  
այլ հիւսք զափնեաց : Բայց առ սնարաւ  
Գլխակոր՝ ի վերեզմանդ՝  
ունկըն զընեմ լութեան մահու  
Ուր՝ ի ստուերս մշտագիշեր  
հոլաթեէ քո մեծ հոգի  
Ճառագայթն Աստուածացու  
որ առ Աստուած անդին դառնայ :  
Այժմ որպիսի՛ արգեօք սեսիլը  
աշացդ հանդէու կերպարանին  
Մնսահման տիեզերք

քեզ ըզգաղտնիսըն մերկանան .  
Յականակիտ յօրինուածսըն  
հոլովին աստեղատունք  
Յաւիտենականութեան  
նըւագաւորք լուսանիւթ .  
Եւ զին նշմարես  
ընդպրկելով զանհունութիւն .  
Եւ զերկիր հեռաւոր՝  
ուր աշխարեն սիրելիք քո՝  
Նորաթեւ իմըն հրեշտակ՝  
մատնեալ մահու և ըստուերաց :  
Ո՛վ առ հարցուածս այնչափ դարուց  
յաւիտենից համըր դամրան ,  
Խօսեաց՝ ասա ցընո՞րք են այս  
և յանյատակ ունջըս քոյին ,  
Բընակիցի ոչնչութիւն՝  
փայլակնապսակ իշխան վընի  
դահ եղեալ իւր զաւերակս  
ափեղերաց՝ և պարառեալ  
Տժգոյն լուսով բիւրոց ոգեաց  
զոր՝ ի յերկրէ կորզէ անդուլ :  
Իցե՞ս զու մեծ՝ ո՛վ ոչինչ՝  
քան ըզկատովն և զԱրիսդիտա  
Ճղթայակապ առ զահոյիւքդ  
իցե՞ն Բրուտոս՝ Հայկ և Վահէ :  
Խօսեաց՝ Ասուեր . փայլեա՝ լութիւն .

անհետացիր՝ ջարակոյս  
 Ուրուականդ արձանացեալ  
 ընդ Տիեզերս և ընդ Աստուած . . .  
 Եւ դու՝ ով մեծդ՝ 'ի տեսիլ  
 առ սաւս քո բացեալ շիրմին  
 Ահաբեկ՝ ցնորեալ՝  
 պակեանը արդեօք 'ի մթութենէ .  
 Եւ որդեկաց անդուսպ դորով՝  
 պայծառ նըշոյլ զանդնդոյլը՝  
 Եցոյց քեզ զոշնչութիւն  
 ևս գժնեայ, և կարելէր  
 Յանուատում ցաւոց արդեօք  
 հառաշեցնը անտրձագանդ,  
 Յերազեալ՝ մանուկ՝ զերիինս,  
 և ծեր՝ զըտեալ զանկութիւն . . .  
 Թէ խորամուխ աչք քո անցեալ  
 թափ բնդ անդունդ բատունքամած՝  
 Բերկրութեամբ նշմարեց՝  
 զԱստուածութիւն խոյանալ անդ՝  
 Զանսպառ բանալով  
 զօղորմութեանն առ քեզ բզիւս:  
 Այս՛ անդ՝ ճշմարտութեան  
 'ի բնադատ կեաս՝ Ազաթոն .  
 Մեզ՝ յանձանօթ այսր ուղւող՝  
 մըրիլը մըրայլը՝ անուրջը զառինք.  
 Դու յերկրորդ որրանէ դ՝

'ի դամբանէ՝ զարթնուս 'ի կեանս .  
 Եւ 'ի ժամանէ յերթս անդ 'ի վեր՝  
 ծաղի յուսոյ մեղ արշալոյս :

Դ.

Դեռ հասարակ 'ի տըւնջեան  
 արեւդ 'ի մնուսա անդ խոնարհեալ  
 Յոյր շողից այնչափ աստեղք  
 տածէին շորջ ըզբե 'ի ծիր,  
 Այնչափ ծաղկունք մնուացեալը .  
 յեմակաց ծերպըս հովասուն,  
 Եւրոպէ ընդ Ասիոյ  
 կան պըշուցեալը 'ի քո ճաճանչս  
 Որ կափարչիդ այլր 'ի խորշից  
 սլանան զեռևս յեթեր կապոյտ,  
 Եւ Հայաստան՝ մայր որդեզիրի՝  
 տրաում յենու 'ի զամբան անզր  
 Յոր որդեկաց պար նազելի  
 և ամուսին արտօսրալից  
 Արտարեկ բազիսելով՝  
 լան և չառնուն պատասխանի :  
 Խակ ես՝ նշգեհ բնարահար՝  
 զորով սիրոյդ աեղացին շողք  
 Քան զերկրիս ոլորտս և անզր  
 ըզքեզ՝ 'ի լոյս նշմարելով՝

Քընարանիդ կառեալ յեղերս՝  
աղաղակեմ սիրտ ՚ի բըռին.  
“Ողջոյն ով մեծդ՝ ողջոյն վերջին.  
կարուց անուն քո յաղթեսցէ  
Թէ Մուսայից հաւատարիմ  
աստուածաղեաց են թելաղբանք,  
՚ի մըտանել քում ՚ի գամբան  
ոչ կըքեցեր ըզլուփ ՚ի վայր.  
Այլ առ ըզթեզ ընդունիլ  
մեծացաւ նա : — Քեզ հուսկ ողջոյն.  
Ոչ այս մահ է՝ Աղաթոն՝  
այլ ճշմարիտ անմահութիւն :

Թ. Թէրքեսս

## Ի ՄԱՀ

ՎՍԵՄԱՓԱՅԼ ԳՐԻԳՈՐԻ ԷՖԵՆՏԻՈՆ ԱՂԱԹՈՆ

6. Մրասատոչոր ով տեսարան  
ախրատեսիլ . . . .  
Հրեշտակը զուրաթունք լուսափայլ  
զգագաղաւ ախրամած  
Պատեալ սուղ, և ահա թոչին յերկինս  
զայերս հերձեալ երկնասոլաք.

Ամենուրեք լալօնից լսեն յերկրի  
ձայնք և ողբոց,  
Այլ այլորիկ, ոհ, չհասանեն  
՚ի զուարթնոցն յականջս,  
Ո՛տիւռք արբանեակք անագորոյն  
դառն մահու,  
Յո՞ զաշխարհի սիրելին  
վեհապետաց ըզպատուեալն,  
զ'Ազգին զյոյս քաղցրիկ  
և բերկրութիւն ընտանեաց  
Յո՞ տանիք քեցեալ  
՚ի գրկաց սիրելեացն ամենայն.  
Է՞ր զհայրենեաց շողզոզուն զասաղըն  
ծածկեք ընդ սեաւ ամզօք,  
Որ մթագին ՚ի զիշերս լոյս  
մօրն չայոց պարգեւէր,  
Գթոյ Աստուած, ոչ պաղատանք,  
ինկոց բուրմունք՝ ՚ի վոյ աթոռ բարձրացան  
Զուառ ամուսնոյ, որ մերթ յերկինս զ'աշս  
և մերթ զարտակցաւն յածէր,  
Հէք որդեկաց, որ զիրկ ՚ի վերջին հօր  
գզուանաց և համբուրից,  
Զողորմ հառաշս ՚ի թեւս հողմոց,  
՚ի նշոյլս լուսնեկի ապաստան,  
Ցափունս Անոայ յըղէին  
առ անձկալին հայր իւրեանց :

Աստուած անմահ, ո՛չ լուար, ո՞հ,  
 զարտասուախառն աղերս,  
**Ոոր** հայաստան սուրբ մայր  
     առ գահդ հանէր յաւերժն.  
**Այսպէս** ուրեմն կորիցեն,  
     եշխանդ մանու և կենաց,  
**Այն** ինչ՝ ի մայրենեաց թագին  
     փողփողեալ՝ ի ճաճանչ,  
**Այն** ինչ շողեալ ի լոյս  
     աստեղն բարձու նըսեհի,  
**Այսպէս** ուրեմն վշրեսցեն,  
     ւ'անկցին զոհաբք պատուականք,  
     Աւաղ, չիք այլ Աղաթոն,  
     չիք այլ հոգին վեհազոյն,  
**Որոյ** չքնաղ հանճար  
     ըզչայս յԵւրոպ պանծացոյց,  
**Ո՛հ**, խամրեցաւ զերդ վարդից թերթու  
     փըթթեալս ընդ այցն,  
**Ցորս** տածէր ըզձիւ խորհուրդ  
     և յոյս նորոյ սերբնդեան....  
**Բարեկ**, խորչակ հարաւ  
     բարձրագագաթն վեհ ծառոյն,  
**Որ** Շահնազար — Նուսպարայ  
     տաճարին կայր հոլանի....  
**Շիջաւ** վառ ջահ,  
     որ՝ ի տան թորգոմայ սերճ փայլեցաւ...

**Մութ** կալաւ զաշս Հայկայ  
     հաստոյր էր հարուածն  
**Արին** ընդ սիրան ընթացաւ  
     զի՝ ի նմա բողբոջէին արագ  
**Մեծ** փառաց սերմոնք և սըրաին  
     անձուկ իդձը....  
**Մեռաւ....** այլ թռեաւ նա,  
     ուր բարձրեալն զիւր աթոռ  
**Եղեալ** զիտէ աստեղց համայն  
     ըզհոլով.  
**Թռեաւ** նա, ուր  
     միահեծան ինքն է տէր.  
**Ուր** փառք հանգոյն չ'են աշխարհի  
     զաղփաղփուն.  
**Արեգական**  
     ուր չ'իք ի մուտս խանարհիլ,  
**Եւ** ուր զարուն երանութեան  
     տիրէ ցանկ.  
**Ալացաւ** հոգին յԱղին  
     անանց՝ ի վայելս,  
     ի հայրենիս հանուրց  
     Ազգի մարդկութեան.  
**Ուր** հոգիք սուրբք,  
     պայծառ ճրգանցն փոխանակ.  
**Ծըծեն** զկենաց հիւթ  
     անմահից անապակ.

Յաշխարհի աստ վաղանցիկ  
նորա 'ի կուրծս փայլեցան  
Լէգէոնայ, կանակապ  
եղանելի շքանշանք,  
Այլ անդ 'ի սիրտն  
զոհեցելոյն 'ի Գոզգոմժա  
Շողողեսցի լուսաշող խաչ  
մեծի մարտիրոսին.  
Ալացաւ հոգին այն անմահ,  
ւ'այսպէս լացցուք մեք ընդէ՞ր  
Մինչ յիշատակ քանդակեալ նորա  
կեցցէ 'ի սիրտս մեր,  
Մի ևս ապա աւաղ չքնաղ  
հոգւոյն կարդասցուք,  
Նա եղեալ զիւր հանգիստ,  
մեք 'ի ծուփս ցաւոց կենցաղոս :

Եղիա - Հ. Կ. Տէմիրձիպաշեան  
յաշակերտաց Ա-Նուզպար-Շահնա-  
զար Գիշերօրիկ վարժարանի

ՎէֆԱթը ԳՐԻԳՈՐ ԷՖԻՆՏԻ Ա.Ա.ԹՈՒՆԵԱՆ

Ջանի տիր տիւնեամբզ, սիճիլ էպէտի  
ֆէյլէսօփ, ալիմ, ֆանի տիր տէտի  
Նիշէ շան ու շէօհրէթ աիւշ կիպի կէշտի  
Տէրտ մէշագգամթէ պէսլէնիր ճիհան.

Իգպալ ու իսպար պիր գարար կէշէր  
Հէր ինսան ճիհանտա մահզա մհ իտէր  
Անը կէօզ եաշը ինսանը պէսլէր  
Չիւն պէօլէ տիր սիճիլ ձէնապը Հազզտան.

Տիյնէյին ահիպպամ, տիյնէյին տէրիմ  
Տէշէթթիւ ահլալիմ պէյան իտէյիմ  
Նատիրէն պուլունուք պու պէնիմ հալիմ  
Նէ չարէ պույտմուշ պիզէ եազըլան.

Մէրիզ այ մուգատտէմ պիր տալէթ կէլտի  
Եօլ բէվան օլմաղա էմիր վէրիլտի  
Պու տէփա եօլճուուք Բարիսէ տէնտի  
Մէկէր ախորէթ իշին վէրիլմիշ վէրման .

Սնինտէ պու էմրէ մունթազըր օլտում  
Տէվլէթ խըտմէթինէ հէր ան հազըրըմ  
Միւլք միւլէթէ օլսուն դօ ֆէտա ճանըմ  
Պունա չալըշմալը ալէմտէ քէսան.  
Մէվլիւիւ վէտէրիմ, տէտի մահտումիմ

Պիզէ օլուր մաթէմ պու աղիմէթին  
Բուզու շէպ պէքէրիզ սէնին ալտէթին  
Մէկէր ֆէլէք անա օլմուշ նումայան.

Զէշմի կիրեանա անլէրի սալտըմ  
Բապպիյէ սրփարը իթախմ այրըլաըմ  
Վարօրա բաքիպէն եօլա տըր չըգտըմ  
Մէկէր ախրէթ իշին վէրիլմիշ ֆէրման.

Բարիսէ վասլ օլուս սաղ սէլիմ չըգտըմ  
Անինտէ իշիմէ ճանաան սարըլաըմ  
Ճահա ու դայրէթի հիշ սագլնմատըմ  
Չինքի պունուն իշին տօղմուշ տուր ինսան.

Պիրտէ Պաս Ալիտէն կէլտի պիր տալիլթ  
Էմր օլտու վէթանա իթմէկէ ալտէթ  
Պախշ օլմուշ պանա պիր եէնի նէ զարէթ  
Նէ չարէ սիլամընա օլմատըմ շայեան.

Տէհէթլիւ պիր իլլէթ կիաէրէք արթաը  
Էճէլ աէօշէյինէ պէնի եաթըրաը.  
Քեաֆիէի վիճուտում սարտը պըրագաը  
Տէախէր տէրտինէ օլամազ տէրման.

Էճնէպի թօփրագաա չարէսիզ գալտըմ  
Քիշի վէթանը արզիլէր տայըր  
Նէ գատար խօշ օլսա տէկիլ թօփրագաը  
Նէ չարէ տէրտիմէ օլմատը տէրման.

Ինսան պու միհանտէ օլամազ պէտպախտ  
Նէ շէքի տօսթու վար գօ օլսուն պիկայտ  
Անլէրէ թէշէքքիւր իյլէսին պիհատ  
Պիւն մէրտ տօսթ իլէ մնոթլու տուր հէր ան.

Աղիզ ահիպպամ եանըմտա պուլտում  
Տօսթլար պէն տէտիմ, քէտտիմ ումուտում  
Կմրու իլահիյէ մունթազըր օլտում  
Նէ չարէ տէրտիմէ եօղումուշ տէրման.

Ասլա պանա զօրգու վէրմէզ վէֆաթըմ  
Վէթան իշին տայմա օլմուշ տուր ճահաթըմ  
Միւլը ու միլլէթիմէ աղ չօզ չալըշտըմ  
Վագըթ տըր իթմէկէ թէստիլի մէքեան.

Թապիպիմ Նէլաթոն թէքրարէն կէլտի  
Հալիմի կէօրտիքտէ թէկսիփ իթտի  
Ուն ու վահ էտէրէք պըրագաը կիթտի  
Մէկէր պու օլուրմուշ վէֆաթա նըշան.

Տէհէմի կէօրտիքտէ ահ իտիւպ շէքտիմ  
Խուշ մագսըմարըմ տէր խաթըր իթտիմ  
Խօմրիւմիւն հէեաթը երուանդա եանտիմ  
Զալըմ գէլէք պէնի իթտի վէրուշան.

Աճ'ըյըմըշ էլլաթտան գալարաք մահրում  
Ախէր պիր թօփրաբտա օլմաք տա մէհրում  
Մէվլամ տիշմանըր սագլատըն տօսթում  
Պու տէրտէ եօղումուշ ճիհանտէ տէրման

Էթրաֆըմ գուշաթտը պիր թաղըմ զէվաթ  
 Անլէրէ պագմայա գալմատը թագաթ  
 Անտէ քի մէլճուտ տուր էպէտի հայաթ  
 Զէվերտի կէօղէրիմ, սէօնտիւ պու ճիհան.


Սէվկիւլիւմ միլէթտաշ պէնի աղլէմէ  
 Կէօղիւնիւ եաշընը պէյհուտէ տէօքմէ  
 Իլմ ու փաղիւլէթէ տայըմ ճահտ էյլէ  
 Միւլը ու միլէթինէ սատըդ օլ հէր ան.

Մահզա պունու սանա իտէրիմ իխթար  
 Գօ հայաթըմ տայմա օլսուն պէրկիւզար  
 Զօղ սիրմէզ սանա տա ֆէլէք օլուր եար  
 Աղաթոնուն էշի իշթէ, տէր ճիհան.

Աղլէմէ զէլճէմ սէն, աղլէմէ պախտըմ  
 Վէփաթըմոա սանա պիր խալէփ պըրագտըմ  
 Աղաթոն ճինսինէ Երուանդ սազլատըմ  
 Օ օլուր սիզէրէ թէրէգֆիւ իւ շան.

Սէնէ պին սէքիզ եիւզ ալթմը սէքիզտէ  
 Մահը նիսանըն թամ եիրմ՝ իքիսինաէ  
 Օլ գարա սատըըն օն իքիսինաէ  
 Հայաթըմըն շէմսի պաթտը նակէհան:





50 մ.դ.

5474

0001547

2013



